

1817

Հ. ԱԶԱՏՅԱՆ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Ն ՇՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1929

9(42)

Վ. 22

30 MAY 2011

19 AUG 2006

9(42)

Վ-22

Հ. ԱԶԱՏԱՆ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
Ա Ն Գ Լ Ի Ա Յ ՈՒ Մ



2140
38

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1929

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՍՌԱՎԱՐՈՒՅՅՈՒՆՆ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

I

Վերջին ամիսները չափազանց հարուստ են խոշոր քաղաքական դեպքերով, սակայն նրանցից վոչ մեկին վիճակված չէր ամբողջ մարդկության ուշադրությունն աչն աստիճան իր վրա բեռեկու, ինչպես այդ տեղի ունեցավ Անգլիայի պարլամենտական ընտրությունների նկատմամբ: Այդ լարված հետաքրքրության պատճառը բոլորին հայտնի չե: Նրա հիմքը վոչ թե բարեկամության, հարգանքի, սիրո ունվիրվածության զգացմունքներն են, այլ մասսայական ակտիվությունը, անգլիական կապիտալի դիրքերի թուլացման և անգլիական բուրժուազիայի տիրապետության խորտակման անհամբեր սպասելիքներն են: Միջազգային բանվորությունը և Անգլիայի լծի տակ տքնող հարյուր միլիոնավոր գաղութային ժողովուրդները չեն միայն, վոր անգլիական բուրժուազիայի նկատմամբ լցված են ատելությամբ և նրա կործանման հույսերով են սնվում: Անգլիայի համաշխարհային տիրապետության կործանմանը ձգտողների թվին են պատկանում նաև բազմաթիվ բուրժուական պետություններ:

Ինչպես տեսնում ենք, ընտրությունների շուրջն առաջացած համաշխարհային հետաքրքրությունն անգլիական բուրժուազիային իսպառ պատիվ չի բերում. այդ հետաքրքրությամբ պարծենալ անգլիական բուրժուազիան չի կարող: Անհնարին է նշել մի այլ բուր-

ՊԵՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԻ ՏՄԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատվեր № 796 Հր. № 1036

Տիրած 2500

Գրառեպվար № 2664 Բ.



69505.68

ժուական լերկիր, վորի տիրապետող դասակարգներն այս աստիճան արժանացած լինելին ասելու թյան:

Յերկու դար շարունակ Անգլիան աշխարհի ամենահզոր պետութունն է լեղել, բայց հայտնի չէ, վոր բուրժուազիայի հզորության հիմքն աշխատավոր մասսաների շահագործումը, սեփականազրկումը և սարկացումն և: Բոլոր դարերի պատմությանը հայտնի չե տիրապետող մի այլ դասակարգ, վորը ժողովրդական լայն մասսաներին ճնշելու, շահագործելու, սարկացնելու և Ֆրիդիկայեն վոչնչացնելու գործում անգլիական բուրժուազիայի հետ մրցել կարողանար: Վարձու բանվորին շահագործելու միջոցով չէ միայն, վոր անգլիական բուրժուազիան համաշխարհային տիրապետության է հասել: Դեռ այսօր ել նա աշխարհի խոշորագույն սարկատերն է, վորին հին Յեզիպտոսի կամ հին Հռոմի սարկատեր դասակարգներն ամենայն իրավունքով նախանձել կարող էին:

Բուրժուական գրականության մեջ Անգլիան հըռչակված է նաև վորպես աշխարհի ամենահին դեմոկրատիա: Բնական է, վոր խոսքն այստեղ վերաբերում է բուրժուական դեմոկրատիային, սակայն կյանքի այս բնադավառում ել անգլիական բուրժուազիան պարծենալու վոչինչ չունի: Նրա դեմոկրատիզմի շատագուր վրնելու համար պետք է նախապես ընդունել, վոր մարդու և քաղաքացու իրավունքներով կարող են ոգավել կազմածատերերը և կապիտալիստները միայն: Հայտնի չէ, վոր Անգլիայի կանանց մի խոշոր տոկոսը—մոտ 5 միլիոն հոգի—վերջերս միայն ընտրական իրավունք ստացավ: Հայտնի չէ նաև, վոր Անգլիայի բանվոր դասակարգն ընտրական իրավունք է ստացել վոչ թե

անգլիական բուրժուազիայից կամ նրա հեղափոխութունների շրջանում, այլ այդ հեղափոխութուններից հետո, մեկ ու կես դար տեղ համառ կովի միջոցով, կովի, վոր ուղղված էր վոչ թե ընդդեմ միջնադարյան դասակարգերի, այլ ընդդեմ ամենաժամանակակից բուրժուազիայի: Անգլիայի բանվորութունը դեռ այսօր ել զուրկ է կոալիցիայի իրավունքից, վորը նա ձեռք էր բերել չերկարատե ու համառ կովի միջոցով և վորից զրկվեց 1927 թ. «հայտնի» որենքով: Ել չենք խոսում «դեմոկրատական» Անգլիայի գաղութների մասին կամ միջնադարյան կարգերի այն մնացորդների մասին, վորոնցով այդ յերկիրն այնքան հարուստ է: Անգլիայի դեմոկրատական կարգերը բնորոշելու համար կանգ չենք առնում նաև այն բարբարոս վերաբերմունքի վրա, վոր անգլիական բուրժուազիան ցույց է տալիս դեպի անգլիական կոմունիստները:

Կապիտալներով, սարուկներով և իշխանությամբ անգլիական բուրժուազիան միշտ ել չափազանց հարուստ է լեղել, բայց նույնքան աղքատ է լեղել դեմոկրատիզմով: Այժմ նրան միճակված է իր կապիտալիստական տիրապետության կարավի յերգը յերգել: Աշխարհի ամենահին և ամենահզոր կապիտալիստական յերկիրն այժմ նրանով է հողատարված, թե ինչպես վերկի իր գոյութունը: Նրան վտանգ է սպառնում վոչ միայն համաշխարհային կոմունիզմի և գաղութային շարժումների կողմից, այլև խոշոր կապիտալիստական պետութունների կողմից, վորոնց հետ հաջողությամբ մրցելը տարեց տարի նրա համար դժվարանում է, և վորոնց նոր գորեղացումն ամենից առաջ Անգլիայի

տիրապետութեան սահմանափակում ե պահանջում: Անգլիական բուրժուազիան պրոգրեսսիվ կերպով սնանկանում ե, սնանկանում ե այնքան ակներև կերպով վոր նուշխակ իլլուզիաներով տարվելը ե ինքնախարհչությամբ զբաղվելը նրա համար անհնարին ե դարձել: Ձի կարելի չափազանցութուն կամ պատահակաութուն տեսնել Չերչիլի այն հայտարարութեան մեջ, թե 20-րդ դարն Անգլիայի համար չարաբաստիկ դար ե, ե չեթե անգլիական պետութունն անզոր դուրս գալու ձեռքով աշխարհում իր առաջ զբաժ խնդիրներն, այդ դեպքում Անգլիային քայքայում ե կործանում ե սպառնում: Պատահականութուն չե նաև պահպանողականները մի այլ ղեկավարի կողմից արած այն հայտարարութունը, թե Լլոյդ Ջորջն այն միակ մարդն ե Անգլիայում, վորը դեռ ընդունակ ե հավատարու Անգլիայի անտեսական-կուլտուրական պրոգրեսսիվ աճմանը: Նշանակալից ե, վոր Լլոյդ Ջորջի կուսակցութեան շարքերում ել վերջերս հաճախակի գանգատներ են լսվում այն մասին, վոր Անգլիայի ընտրական իրավունքը շատ թերութուններ ունի, այսինքն վոր Անգլիան դեմոկրատական լինելուց դեռ շատ հեռու չե: Պ. պ. ազատամիտները մոռանում են մի բան միայն, վոր դեմոկրատիզմի սահմանափակումների հեղինակները հենց իրենք են:

Մայիսի 30-ին տեղի ունեցած պարլամենտական ընտրութուններին Անգլիայի բուրժուական կուսակցութունները ծանր պարտութուն կրեցին: Այդ պարտութունը հետևանք ե այն քրոնիկական ե անբուժելի հիվանդութեան, վորով անգլիական կապիտալիզմը բռնված ե «չարաբաստիկ» 20-րդ դարում ե վոր

ընց անգլիական բուրժուազիան անզոր չեղավ բուժվելու վոր պատերազմի միջոցով ե վոր հետպատերազմյան տարիներում վարած իր ծայրահեղ ուսկցիոն, հարձակողական ե միաժամանակ պրովոկացիոն քաղաքականութեան միջոցով: Մայիսի 10-ին, պարլամենտի ցրման օրը, նրա կազմի մեջ մտնում ե ին 396 պահպանողական, 160 բանվորական կուսակցութեան ներկայացուցիչ, 46 ազատամիտ, 7 անկուսակցական («անկախներ»), 6 տեղ մնացել ե ին թափուր: Վերջին ընտրութունների հետևանքով բանվորական կուսակցութունն ստացավ 288 մանդատ, պահպանողականները—257, ազատամիտները—58, անկուսակցականները—8: Իսկ պատերազմից հետո տեղի ունեցած հինգ ընտրութունների հետևանքները հետևյալն են.

	1918 P.	1922 P.	1923 P.	1924 P.	1929 P.
Պահպանողականներ	384	344	258	418	257
Ազատամիտներ	161	64	158	42	58
Բանվ. կուսակցութուն	57	142	191	151	288

Այս աղյուսակից պարզ յերևում ե, թե ինչու ընտրական պայքարը համարյա բացառապես պահպանողականների ե բանվորական կուսակցութեան միջև եր մղվում: Ազատամիտները (լիբերալները) թեև նոր 16 տեղ ե ին ձեռք բերել, բայց համայնքների պատի կազմում մի այնքան աննշան տոկոս են ներկայացնում, վոր նրանց կարելի չե արդեն հաշվի չառնել: Իմպերիալիստական կապիտալիզմի զարգացման պայմանները մեզ թույլ են տալիս պնդելու, վոր ան-

զլիտական լիբերալ կուսակցությունն իր վաղեմի հզոր զինքերն ու փառքն ալլևս չերեք վերականգնել չի կարող: Պարբանտում ել պալատը մզվելու յի գլխա՝ վորապես բանվորական կուսակցության և պահպանողականների միջև, վորոնցից առաջինը նվաճեց 288 սեզ, ձեռք բերելով նոր 137 մանդատ, իսկ պահպանողականներն ստացան ընդամենը 257 սեզ, կորցնելով 101 մանդատ:

1924 թ. պահպանողականները չափազանց մեծ հաղթութուն տարան, ոգավելով գլխավորապես քաղաքական պրովոկացիայի զենքից (Զինովյեին վերագրվող նամակը, Անգլիայի կործանման վտանգը կոմիստերնի կողմից և այլն): Սակաջ իրենց անբաժան տիրապետության այս տարիներում նրանք չե թե անզոր գտնվեցին ոգտագործելու այդ հաղթության պլատուզները, այլ դեռ քաղաքականապես սնանկացան բանվորական մասսաների աչքում կատարելապես վարկարեկվեցին:

Այս ժամանակաշրջանում նրանց վարած քաղաքականությունը հասկանալու համար նախ կանգ առնենք յերկրի տնտեսական դրության վրա:

II

Վորպես համաշխարհային նշանակություն ունեցող մի պետություն, վորը մեկ ու կես դար շարունակ ամբողջ աշխարհին իր կամքն եր թելադրում, Անգլիան ալլևս գոյություն չունի — ահա առաջին հիմնական ու վճռական փաստը, վոր ծառանում ե մեկ առաջ: 1913 թ. անգլիական բուրժուազիայի կապիտալիստական ներդրումների 22,3 տոկ. բաժին ել

ընկնում մետրոպոլիային, իսկ 77,7 տոկ.՝ արտասահմանին, այնինչ 1928 թ. ներդրումների ընդհանուր գումարի 60,5 տոկ. մնում ե յերկրի ներսն, իսկ գաղութներ և այլ յերկրներ արտահանվում ե 39,5 տոկ.: Այսինքն անգլիական բուրժուազիայի վտաքի տակից արագ տեմպով տնտեսանում ե այն հողը, վորի վրա յերկու դարի ընթացքում կառուցվել ե նրա համաշխարհային տիրապետության վիթխարի շենքը և այդ հողը նրա վտաքի տակից տնտեսանում ե իմպերիալիզմի դարաշրջանում, յերբ կապիտալի պրոգրեսսիվորեն աճող արտահանումը և գաղութային նվաճումները կապիտալիստական տնտեսության գոյության ու առաջխաղացման ամենաանհրաժեշտ, ամենակարևոր նախադրյալներն են: Իր որդանական կառուցվածքի աչքըմյան բարձր աստիճանին հասած լինելով՝ կապիտալն անխուսափելիորեն քայքայման ու մահվան ե դատապարտվում ամենուրեք, վորտեղ բուրժուազիան անզոր ե ստեղծելու նրա գոյության այդ անհրաժեշտ պայմանները:

Հոկտեմբերյան հեղափոխությունը և ԽՍՀ Միության կազմակերպումը, գաղութային և կիսագաղութային յերկրների կապիտալիստական վերելքը և նրանց ազատագրական կռիվը՝ ուղղած գլխավորապես ընդդեմ Անգլիայի տիրապետության, ամերիկական կապիտալի միջազգային նվաճումները և այն ծանր հարվածները, վոր անգլիական կապիտալն որ որի վրա ստանում ե նրա կողմից — ահա այն յերեք հիմնական փաստերը, ահա այն յերեք պատմական շարժումները, վորոնք տարբեր կողմերից հարվածելով անգլիական կապիտալին, նրան հարկադրեցին հա-

մաշխարհային շուկայից յետ քաշվելու, նրա տիրապետութեան ասպարեզը նշանավոր չափերով սահմանավակեցին և նրան հրամայողաբար թեկադրեցին բավարարվել գլխավորապես «սիրելի հայրենիք» շրջանակներով:

Անգլիական կապիտալի նկատմամբ ամերիկական կապիտալն այնքան և զորեղացել, վոր բուն Անգլիայի սերրիտորիայի վրա չէլ նրա դեմ հաջողութեամբ կըսվում ե: Ամերիկական կապիտալն սկսել է Անգլիայում նույն դերը խաղալ, վորն այնքան հատուկ եր Գերմանիայի կապիտալին նախապատերազմյան շրջանում: Ամերիկական կապիտալի կողմից անգլիական կապիտալին այնքան խոշոր վտանգ ե սպառնում, իսկ նրան հաղթահարելը մրցման գուտ անտեսական չեղանակներով անգլիական բուրժուազիայի համար այնքան դժվար ե, վոր նրա դեմ կռվելու համար անգլիական բուրժուազիան ձեռնարկել ե մի շարք քաղաքական սահմանավակումներ: Այսպես, որինակ, վորոշ ակցիոներական ընկերութուններ իրենց կանոնադրութունների մեջ կետեր են մտցնում, վորոնցով ակցիաների վաճառումն ոտարերկրացիներին արգելվում ե. մյուսներն այդքան հեռու չեն գնում, բայց ոտարերկրյա ակցիոներներին զրկում են ձայնի իրավունքից, այսինքն ընկերութեան գործերը ղեկավարելու հնարավորութունից: Այս շարժումը հասկանալու համար պետք ե իմանալ վոր վորոշ ընկերութունների ակցիաների կեսից ավելին պատկանում ե ամերիկացիներին: Այսպես, որինակ, անգլիական «Ջեներալ էլեկտրիկ» ընկերութեան ակցիաների 60 տոկ. կենտրոնացած ե ամերիկացիների ձեռքում, այսինքն՝ յեթե ամերիկացիներն

անչէ ընկերութեան մեջ լիակատար քաղաքացիական իրավունք վաչելեցին, ապա նրանք հնարավորութուն կունենային այդ ընկերութեան միջոցով տարածելու իրենց ազդեցութունն անգլիական արդունաբերութեան մի շարք ճյուղերի վրա:

Յերկրագնդի շատ անկյուններից անգլիական կապիտալն աստիճանաբար վտարվում ե, բայց բուն անգլիական տերրիտորիայի վրա չէլ իրեն ապահով զգալ չի կարող: Յեթե Անգլիայի վողջ անտեսութեան մակարդակը 1924 թ. համար ընդունենք վորպես 100, ապա 1927 թվականի համար կստանանք 96,2⁰/₀, իսկ 1928 թ. առաջին չերք յեռամսյակների համար՝ 93,4—91,6—84,8⁰/₀: Պահպանողականների տիրապետութեան շրջանում Անգլիան չկարողացավ հասնել անտեսական զարգացման այն մակարդակին, վորի վրա կանգնած եր 1924 թ., յերբ իր արտադրանքի ֆիզիկական ծավալով անգլիական արդունաբերութունը 1913 թ. իր վիճակին դեռ չեր հասել, կազմելով այդ թվականի արտադրանքի 90,9 տոկոսը: Վերջին տարիներում Անգլիայի արդունաբերութունն այնքան դանդաղ քայլերով ե առաջ գնում, վոր նրա դրութունը կարելի չե բնորոշել միայն վորպես ճահճացման դրութուն: Այսպես, որինակ, վերջին չորս տարվա ընթացքում բավականի սպառումը հավասար ե (միջին թվով) 1924 թ. վականի սպառման 106 տոկոսին, իսկ 1928 թ. չորս յեռամսյակներում 108—106—96—81⁰/₀: Նույն տարիների համար յերկաթի և պողպատի սպառման միջին տոկոսն ե 92,5 (1924 թ.=100), էլեկտրական եներգիայի սպառման տոկոսը—103, արտահանման տոկոսը—101 և այլն:

կան մի զորեղ նավատորմ — ծովային և ողային նավատորմ, վորն անգլիական բուրժուազիայի վրա սարսափ և տարածում, վորովհետև պատերազմի դեպքում բրիտանական կղզիները կարող են պաշարվել, և հզոր Անգլիան քաղցի զոհ կգնա: Պետք է իմանալ, վոր Անգլիան կարող է վոչ ափելի, քան 7-8 շաբաթվա սննդի պաշար ունենալ, այնպես վոր պաշարման դեպքում — նույնիսկ առանց վորևե պատերազմական գործողությունների — չերկու ամսից հետո Անգլիան հարկազրկված կլինի ընդունել իր պարտութունը:

Անգլիային թշնամի և նրա դեմ հաջողությամբ կովող կապիտալիստական բանակն Ամերիկայով չէ սահմանափակվում: Պատերազմից հետո Ֆրանսիան դարձավ խոշոր արդյունաբերական մի չերկիր, իսկ Գերմանիան հաջողեցրեց այն աստիճան վերականգնել և բարձրացնել իր արդյունաբերութունը, այն աստիճան կատարելագործել իր տեխնիկան և արտադրական մեթոդները, վոր Անգլիայի հետ վոչ միայն մրցում է, այլ սկսում է նրա համար նույնքան վըտանգավոր դառնալ, ինչքան վտանգավոր էր պատերազմից առաջ: Սահմանափակվելով միայն չուգունի և պողպատի արտադրութունով, տեսնում ենք, վոր չորս խոշորագույն կապիտալիստական չերկրները 1927 և 1928 թ. թ. արտադրել են.

	1927	1928	1927	1928
	Չուգուն		Պողպատ	
Հ. Ա. Մ. Նահ.	36,5	38,0	44,9	50,4
Գերմանիա	13,0	12,0	16,0	15,0
Ֆրանսիա	9,1	10,0	8,1	9,4
Անգլիա	7,3	6,6	9,1	8,5

Արտադրության այս կարևոր և վճռական ճյուղերում Անգլիան զիջում է վոչ միայն Միացյալ Նահանգներին (6 անգամ), վոչ միայն Գերմանիային (2 անգամ), այլ և Ֆրանսիային:

Անգլիան արագ քայլերով զրկվում է իր նախկին շուկաներից թե առաջավոր կապիտալիստական չերկրներում և թե գաղութներում ու հետամնաց չերկրներում: Այս վերջին չերկրների տնտեսական վերելքը և նրանց հեղափոխական-ազատագրական շարժումները, ինչպես և Միացյալ Նահանգների ու Յապոնիայի նոր նվաճումներն Ամերիկայի վողջ տերրիտորիայի վրա և արևելյան Ասիայում Անգլիայի վողնաշարն ուղղակի փշրեցին: Պատերազմի և Հոկտեմբերյան հեղափոխության հարվածներին ավելացավ անհավասար մրցումը Միացյալ Նահանգների և այլ կապիտալիստական չերկրների կողմից. միևնույն ժամանակ ընդգնմ Անգլիայի ապստամբեցին հարյուր միլիոնավոր նախկին ստրուկներ: Բավական է նկատի առնել հենց միայն մանուֆակտուրայի արտահանումն Անտանտիլու համար, թե գաղութային շարժումներն Անգլիային ինչքան ծանր հարվածներ են հասցրել: 1913 թ. Անգլիան արտահանել է Հնդկաստան 3.067 միլիոն չարդ բամբակե գործվածքներ, իսկ 1927 թ.՝ 1.551 միլ. չարդ միայն: Զինաստան, Յապոնիա և Հոնգկոնգ նույն թվականներին — 773 և 130 միլ. չարդ: Արտահանման նույն բնագավառում և նույն ժամանակամիջոցում Անգլիայի բաժինը նվազել է 82 տոկոսից մինչև 54 տոկ. Յեզիպոստում, 81 տոկոսից մինչև 68 տոկոս — հարավային Աֆրիկայում, 79 տոկոսից մինչև 47 տոկ. —

Կոնստանդուպոլս, 73 սոկոսից մինչև 38 սոկ.—Մեքսիկայում և այլն:

III

Ահա այն տնտեսական առեջքը, վորի վրա 1924—1929 տարիները ընթացքում անգլիական բուրժուազիան հյուսում է իր սեպիցիոն ու անհեռատես քաղաքականութունը: Անգլիայի վտարումը համաշխարհային շուկայից արդեն այնքան լայն չափեր է ընդունել, և նրա վաղեմի համաշխարհային տիրապետության վերականգնումն այնքան անհուսալի գործ է դարձել, վոր Անգլիայում արդեն հիմք է դրվում անձաբուխից բղխող մի թեորիայի, համաձայն վորի անգլիական բուրժուազիան այսուհետև իր ուշադրությունը պետք է կենտրոնացնի ներքին շուկայի վրա:

Վոչ միայն կապիտալիստական տնտեսությունն զարգացումն, այլ և լուկ նրա պահպանումը հնարավոր է ընդլայնած վերարտադրություն հողի վրա միայն, իսկ ընդլայնած վերարտադրությունը կապիտալիզմի պայմաններում անհրաժեշտորեն պահանջում է վոչ միայն պրոդրեսսիվորեն աճող կուտակում, այլ և շուկայի ընդլայնում: Իր տնտեսական վերելքի և իր տիրապետություն այս յերկու հիմնական բնագավառներում անգլիական բուրժուազիան տարեցտարի թուլանում, սնանկանում է: Անցյալում կատարած վիթխարի կուտակման և անցյալում նվաճած լայնածավալ շուկաների շնորհիվ է միայն, վոր նա կարողանում է շարունակել իր գոյությունը և պահպանել և իր համաշխարհային տիրապետության դիրքերի մի մասը: Բընական է, վոր տնտեսական ճահճացման պայմաններում

ում անգլիական բուրժուազիան կամա-ակամա պետք է արտակարգ միջոցների դիմի և արտակարգ ծախքեր կատարի, վորպեսզի կարողանա գեթ ժամանակավորապես պահպանել իր դիրքերի մի մասը:

Մոտ յերկու հարյուր տարվա ընթացքում Անգլիան ամենատիպիկ կապիտալիստական յերկիրն է յեղել: Այժմ էլ նա ամենատիպիկ կապիտալիստական յերկիրն է այն տեսակետից, վոր կապիտալիզմի արդի քրոնիկական ճգնաժամն իր ամենակլասսիկարտահայտությունն ստացել է հենց Անգլիայում: Թե այդ յերկրի ներսում ստեղծված դատակարգային հարաբերությունները և թե նրա հարաբերությունները գաղութային յերկրների հետ ցույց են տալիս, վոր անգլիական կապիտալը տազնապի մի յերկարատև շրջան է վտաք կոխել, վորից դուրս գալը նրա ուժերից ընդհանրապես վեր է: Այս քրոնիկական ճգնաժամի շրջանակներում է, վոր անգլիական բուրժուազիային վիճակված է գործել, վիճակված է ըստ հնարավորություն իր տնտեսությունը բարձրացնել և իր գոյությունը ժամանակավորապես փրկել: Անգլիական բուրժուազիայի համար ստեղծված չափազանց ծանր պայմանները նրանից պահանջում են հեռատեսություն, կուռ կազմակերպություն, հետևողականություն և հերոսական գործելակերպ՝ իր ազոնիայի շրջանը հնարավորապես յերկարացնելու համար: Սակայն իր ամբողջ քաղաքականությունը անգլիական բուրժուազիան ցույց տվեց, վոր իր առաջ դրած խընդիրներն անզոր և լուծելու նույնիսկ այդ սահմանափակ շրջանակներում:

Տնտեսական



վում է տիրապետող դասակարգերի իդեոլոգիական կայան վերջին մինխտրություններին: Շտյուրմերից, կազմակերպչական քաջքայունով: Այդ ընդհանուր ուղիակազմովից և մշտաններից Անգլիայի պահպանողաբնքից անգլիական բուրժուազիան ել բացառությունից անխտրները տարբերվում ելին իրենց ազգաչի կազմում: Ինչպես կործանվող բոլոր մշուս դասանունով միայն: Թե լիբերալները և թե բանվորական կարգերը, անգլիական բուրժուազիան ել իր կործանողականությունից ղեկավարները վերջերս բազմաթիվ ման նախորդելին զրկվել և հետևողական և ծրագրահայտարարություններ են արել այն իմաստով, վոր յին գործունեություն ընդունակությունից: Իսկ պարզպահանողականները չունին խելացի ու հեռատես տեսակետի և հետևողական ծրագրի բացակայությունից ղեկավարներ: Ամերիկական բուրժուազիայի շարքերի իշխող դասակարգի շարքերում քառասային դրություններում ել սկսում է տարածվել այն կարծիքը, վոր անե ստեղծում: Անգլիայի վերջին տարիների պատմության պահպանողականների ղեկավարները բթաթյունը մեղ հարուստ նյութ է տալիս այն մասին, վորմիտ, տգետ, անհեռատես, սահմանափակ մարդիկ են: առանձին կապիտալիստները և նրանց առանձին խումբներով Բոլդվինի մտավոր ընդունակությունների բավորումներն իրենց սեփական պետություն քաղաքամասին՝ չերկաթուղայինների ղեկավար Դորբերն ուկանությունն իրենց համար պարտադիր չեն համարադրություն և հրավիրում այն հանգամանքի վրա, բում, և վոր նրանցից ամեն մեկն իր չուրահատուկ քավոր Անգլիայի պրեմյերն իր կյանքի լավագույն մասն դաքահնությունն և վարում: Իսկ չերբմի դասակարգիանց և կացրել իր Ֆերմայի խաղաղ խոզերի շրջահամար նման քառասային դրություն և ստեղծվում, նրանում, բայց վոր ազվես Լյուդ Ջորջից ել բավական ցիրուցան շարքերն իրենց փրկությունն սպասումբան և սովորել: Բոլդվինը և պահպանողականների են յերկնային ուժերից կամ մեծ մարդկանցից: Չնամյուս ղեկավարներն ընտրությունների ժամանակ աչած իր ամբողջ հզորություն և իմաստություն, քրիսմին կողմից նման պատվավոր եպիտոմների ելին արտոնական աստվածն Անգլիայի իր բուրժուական հոթանանում:

տին ոգնել չի կարողանում, միաժամանակ կապիտալիստների քրիստոնեական հոտն անընդունակ է իր շարքերից առաջ քաշելու մեծ մարդկանց, վորոնք կապիտալի համար փրկիչի դեր կատարելին:

Անգլիական բուրժուազիան ծարավ է լուրջ ու հեռատես ղեկավարների, բայց այդ ասպարեզում թափած նրա բոլոր ճիգերն ասպարեզուն են անցնում: Պահպանողականների վերջին մինխտրությունը դարմանալի կերպով նմանում եր ցարական կառավարու

Անգլիական բուրժուազիայի համար թռչելու դարաշրջանը տեղի յե տվել սողալու դարաշրջանին: Գարաշրջանը կրած կորուստը լիովին վերագարձնել անհնարին է, սակայն այդ կորուստի փոխարեն անգլիական բուրժուազիան կարող կլիներ իրեն վորոշ չափով վարձատրել բուն Անգլիայի տնտեսություն վերակազմումով, չեթե ընդունակություն և համարձակություն ունենար Անգլիայի հասարակական կյանքում արմատական փոփոխումներ մտցնելու, փոփոխումներ,

իհարկե, կապիտալիզմի հողի վրա, բուրժուական կապիտալիզմի շրջանակներում: Բայց զաղութները յերկարատև ժամանակ և ընդհանրապես կապիտալի արտահանում անգլիական բուրժուազիտային դաստիարակել են և ուղղութեամբ, այլ վոգոյ, նրան ընտելացրել են հեղհարստանալու սովորութեանը, կուպոններ կտրելու ակցիոներական զիվիդենտ ստանալու ընդունակութեանը դարձրել են նրա ամենամեծ առաքինութեանը: Իր սեփական հասարակական կարգերում իր շարքերում արմատացած պարազիտային հոգեբանութեան ու սովորութեանների մեջ անգլիական բուրժուազիտան պետք է իսկական հեղաշրջում կատարել պետք է միաժամանակ վերացնի միջնադարյան հասարակարգի բոլոր մնացորդները, վորպեսզի ստեղծված պայմաններում կարողանա իր անտեսութեանը քիչ թե շատ ամուր հողի վրա դնել և միջազգային շուկայում պահպանել իր մրցունակութեանը: Բայց պարզ է, վոր իր կործանման նախորդից անգլիական բուրժուազիտան չի կարող ոժտված լինել այն հեղափոխական ընդունակութեաններով, վորոնցից զուրկ է չեղել իր դասակարգա ին հեղափոխութեանները դար սըրջանում:

Իր «Իմպերիալիզմ» հայտնի դործում բուրժուական քաղաքատնտես Հորսոնը ցույց տվեց, վոր արդեն 1893 թ. անգլիական բուրժուազիտան արտասահմանում տեղավորված ունեւր մի կապիտալ, վորը կազմում էր Անգլիայի ամբողջ ժողովրդական հարստութեան 15 տոկոսը: 19-րդ դարի վերջում նրա յեկամուտը միայն այդ աղբյուրից հավասար էր 90—120 միլիոն ֆ.ստ., և այդ աղբյուրը նրա յեկամտի հիմնու-

կան ու ամենամեծ աղբյուրն էր (տես ուս. հրատ., էջ 59—64): Առ 1915 թ. այդ յեկամուտը բարձրանում է մինչև 200 միլ. ֆ.ստ. և առ 1928 թ.—մինչև 285 միլ. ֆ.ստ.: Վորպես յի անգլիական բուրժուազիտան կարողանա իր վոտքի տակ ամուր անտեսակուն հիմք ստեղծել, պետք է վերացնի վոչ միայն անգլիական կալվածատիրութեանը, այլ և պետք է հրաժարվի իմպերիալիստական կապիտալիզմի քաղաքականութեանից: Բայց առաջին քայլն անել նա Ֆիդիկապես անդոր է, իսկ յերկրորդ պահանջը նրան առաջադրել չենք կարող, վորովհետև իմպերիալիստական բուրժուազիտան ինքն իրենից հրաժարվել անընդունակ է. նրա իմպերիալիստական մորթին և ընդհանրապես նրա բուրժուական մորթին քերթելու համար գոյութեան ունի պրոլետարիատը, վորին և պետք է կազմակերպել ու դաստիարակել այդ ուղղութեամբ:

«Известия» թերթի № № 74—75-ում ընկ. Լ. Լապինսկին անգլիական աղբյուրներից մի շարք քաղվածքներ է առաջ բերում այն մասին, թե իմպերիալիստական պարազիտիզմն Անգլիային ինչքան թանգ է նստում: Սկսած 1921 թվականից, միայն ներքին պարտքերի տոկոսների վճարումը պահանջում է արգալին ամբողջ յեկամտի մոտ 7 տոկոս և կազմում է պետական բյուջեյի 22,42 տոկոս 1920—21 թ., 36,42 տոկոս—1925—26 թ.: Արտադրութեան հետ վոչ մի անընդունակ չունեցող յեկամուտները տարեցուտը լի աճում են և պետական բյուջեն ծանրարեւոնում են այն աստիճան, վոր հարկերն այժմ կազմում են արգալին յեկամտի ամբողջ 20 տոկոս, այնինչ նախապատերազմյան տարիներում նրանք հավասար էյին նույն յեկամտի 11 տոկոսին:

Անգլիական բուրժուազիայի համար մի կախարհական շրջան է ստեղծվել, վորից դուրս գալը նրան ընդհանրապես վիճակված չէ: Այսպես, որինակ, արտադրութեան սացրոնալացման բնագավառում պատերազմից հետո նա խոշոր առաջադիմութիւնն է կատարել, բայց հենց այդ «առաջադիմութեամբ» Անգլիայի հասարակական հարաբերութիւններն ավելի խճճել ավելի բարդացրել է, քանի վոր բուրժուազիան կարող է սացրոնալացում կատարել ի հաշիվ պրոլետարիատի միայն: Ռացիոնալացման հետևանքով անգլիական բանվորի դրութիւնը չափազանց ծանրացավ. աճեց գործազուրկների բանակը (այժմ մոտ չերկու միլիոն մարդ), յերկարացավ բանվորական որվա տեղութիւնը, նվազեց ռեալ աշխատավարձը, և բանվորը զրկվեց նույնիսկ իր դասակարգային պայքարի ամենակարևոր նախապայմանից—կուլիցիայի իրավունքի մի շարք հիմնական կետերից: Այն ժամանակ, յերբ խորհրդային իշխանութիւնը գործարանային բանվորների համար բանվորական որվա տեղութիւնը կրճատում է 8-ից մինչև 7 ժամ, անգլիական բուրժուազիան բանվորական որվա տեղութիւնը 7-ից բարձրացնում է մինչև 8 ժամ այն բանվորների համար, վորոնք աշխատում են գետնի տակ:

IV

Կապիտալիզմի ապրած արդի շրջանը քրոնիկական ճգնաժամի շրջան է, և այդ ճգնաժամի շրջանակներում է միայն, վոր բուրժուազիան բարձրացնում է իր արտադրութեան մակարդակը, տեխնիկական ու հապարակական ամեն մի նոր նվաճման միջոցով էլ

ավելի սուր կերպարանք տալով այն ներհակութիւններին, վորոնք արդեն գոյութիւն ունեն, և վորոնց վերացումը նրա ուժերից վեր է ու միշտ էլ վեր կլինի: Կապիտալիզմի վերելքին պատմականորեն հատկացրած այս նեղ շրջանակներում հրաշքներ կատարել չի կարելի, սակայն—ինչպես ցույց է տալիս Մ. Նահանգների, Ֆրանսիայի և Գերմանիայի փորձը—այս տարիների ընթացքում անգլիական բուրժուազիան կարող կլինի չերկրի տնտեսութիւնն ավելի բարձր մակարդակի հասցնել, չեթե ավելի հեռատես լիներ և ոգտագործեր իր տրամադրութեան տակ չեղած բոլոր հնարավորութիւնները: Անգլիական բուրժուազիային ամեն կողմից քննադատում ու դատախետում են վոչ թե նրա համար, վոր անընդունակ գտնվեց վերացնելու տնտեսական ճգնաժամը (1929 թ. բուրժուազիային նման պահանջ վոչվոք չի առաջադրում), այլ նրա համար, վոր «պնդաճակատներն» անընդունակ դուրս չեկան ոգտագործելու մի շարք խոշոր հնարավորութիւններ և իրենց անհեռատես քաղաքականութեամբ Անգլիայի միջազգային դիրքերը բոլորովին թուլացրին:

Պարլամենտական ընտրութիւններին պահպանողականները ջախջախվեցին ամենից առաջ հենց այն պատճառով, վոր ժողովրդական լայն մասսաների մեջ անասելի պայրութեւն է առաջացրել նրանց արտաքին քաղաքականութիւնը, հատկապես նրանց քաղաքականութիւնը խորհրդային Միութեան և Միացյալ Նահանգների նկատմամբ: Պահպանողականների տիրապետութեան այս վերջին շրջանում Անգլիան մեկուսացավ, ամբողջ աշխարհի հանդեպ մի այնքան

Թշնամական գերք բռնեց, վոր անհնարին դարձրեց ամեն մի խաղաղ հարաբերութիւն, իր հետ խոսելու և բանակցելու մի լեզու միայն թողեց—գինքը լեզուն: Նրանց ջախջախման գործում առանձնապէս վճռական դեր կատարեց այն անհուատես քաղաքակա նութիւնը, վոր վերջին տարիներում վարվում էր խորհրդային իշխանութիւնի նկատմամբ: Այս վերջին խնդրի վրա անհրաժեշտ է մի քիչ կանգ առնել:

Ներկա թվականի ապրիլի 5-ին, անգլիական արդյունաբերական կապիտալի ներկայացուցիչների հետ ունեցած զրուցի ժամանակ, քնն. Գ. Պյատակովը հենվելով հարուստ թվական ավյալների վրա, ցույց տվեց, վոր պահպանողականների քաղաքականութիւնը շնորհիվ Անգլիան մեծապէս տուժել է: 1924—25 թ. խորհրդային իշխանութիւնը կողմից Անգլիային պատվերներ է տված 23,5 մլ. ֆ. ստ., իսկ հաջորդ տարիներում՝ 20,5—14,1—5,8 մլ. ֆ. ստ.: 1925—26 թ. խորհրդային Միութիւնը ներմուծվող ապրանքներից Անգլիային բաժին էր ընկնում 18,6 տոկ, իսկ 1927—28 թ.—5,5 տոկոս, այնինչ այդ նույն ժամանակ միջոցում Գերմանիայի բաժինը բարձրացել է 25,5 տոկոսից մինչև 29,5 տոկոս, իսկ Միացյալ Նահանգների բաժինը՝ 17,7 տոկոսից մինչև 22,1 տոկ: Նկատվաւ առնելով, վոր ընթացիկ հնգամյակում արդյունաբերութիւն մեջ 21,7 միլիարդ ուրբու հիմնական աշխատանք է կատարվելու, տրանսպորտի գծով—12,5 մլ. ուրբու, էլեկտրիֆիկացիայի բնագալաում—3,85 մլ. ո. և այլն, ընկ. Պյատակովը գտնում է, վոր հնգամյակի ընթացքում հնարավոր է 150—200 միլիոն ուրբու տեխնիկական սարքավորում ներմու-

ծել Անգլիայից: Ընկ. Պյատակովի կողմից առաջադրած այդ գումարը պետք է ընդունել վորպէս սարքավորման ներմուծման նվազագույն գումար Անգլիայի նկատմամբ, քանի վոր արգեն 1925/26—1927/28 չեղած մյակում արտասահմանում խորհրդային իշխանութիւնը 500 մլ. ուրբու արդյունաբերական սարքավորման պատվերներ է տվել (չհաշված չերկաթուղային և գյուղատնտեսական շինարարութիւն համար տված համապատասխան պատվերների արժեքը):

Հիշյալ 150—200 մլ. ո. գումարով մեր ներծուծումն Անգլիայից, իհարկէ, չի սահմանափակվելու, վորովհետև ներմուծվելու չեն նաև հարյուրավոր այլ նյութեր: 1925/26 թ. ներմուծված էր 88,4 մլ. ուրբու հումուլթ և կիսամշակ նյութեր:

Սորհրդային իշխանութիւնը շահագրգռված է Անգլիայի հետ ավելի լայն աւետարական հարաբերութիւններ հաստատելում, բայց դրանում անհամեմատ ավելի մեծ չափով շահագրգռված է անգլիական բուրժուազիան թե մեզ իր գործարանային արտադրանքը վաճառելու և թե մեզ չերկրից կինսամթերքներ, նավթ, փայթ, կիսամշակ նյութեր և այլն Անգլիա ներմուծելու տեսակետից: Չնայած չերկու չերկրները միջև ստեղծված լարված հարաբերութիւններին, Սորհրդաստեղծված հարաբերութիւններում է Անգլիա. 1925—26 թ. Միութիւնից արտահանված է Անգլիա. 1925—26 թ. վին—187 միլիոն ուրբու ապրանք, 1926/27 թ.—197 միլիոն ուրբ., 1927—28 թ.—147 միլ. ուրբու:

Դեռ պետք է նկատել ունենալ, վոր անգլիական բուրժուազիայի համար այլ չերկրներում պատվերատուներ և գնորդներ գտնելը շատ ավելի դժվար է, քան խորհրդային իշխանութիւն համար իր պատվեր-

ներն այլ յերկրներում տեղավորելը: Չպետք է մոռանալ նաև այն, վոր շնորհիվ իր տեխնիկայի հետամնացութեան, անգլիական բուրժուազիան շատ արանքներ ավելի թանգ գներով է վաճառում, քան ատաղավոր կապիտալիստական յերկրների բուրժուազիան: Այսպես, որինակ, 15—30 ձիու ուժանոց տրակտորն Անգլիայում նստում է 4.200 ռ., Ամերիկայում—2.400 ռ., ապրանքատար ավտոմոբիլն Անգլիայում արժե 6—7 հազար ռ., Իտալիայում—չերեքից չոր հազար ռուբլի և այլն:

V

Պարլամենտական ընտրությունների պատմության մեջ դժվար է նշել մի այլ որինակ, յերբ ընտրությունների հնարավոր հեռանկանքները նախապես այնքան ճշտորեն վերջված լինելին, ինչպես այդ տեղի ուներ անգլիական վերջին ընտրությունների դեպքում: Մակդոնալդը և բանվորական կուսակցության մյուս ղեկավարներն արդեն մինչև ընտրությունները բազմաթիվ հայտարարություններ ելին անում այն իմաստով, վոր պահպանողականները պարտվելու չեն և իշխանությունն իրենց ձեռքն է անցնելու: Պահպանողականների պարտությունը նախորդված էր նրանց ամբողջ քաղաքականությունը, վորն անհեռատես ու հանցավոր քաղաքականություն էր:

«ՅԿ. ЖИЗНЬ» թերթի № 103-ում գետեղված իր հոդվածում ընկ. Տ. Սելյորը 1928 թ. տնտեսական հեռանկանքների մասին առաջ է բերում մի շարք կարծիքներ, վորոնք պատկանում են անգլիական արդյունաբերության ղեկավարներին և պահպանողական

թերթերին: «Առետուրը հիշելու չե 1928 թվականը վորպես հիասթափումների թվական», հայտարարել է «Բրիտանական արդյունաբերության Ֆեդերացիայի» նախագահ լորդ Նբբիշամը: Իսկ պահպանողականների որդան «Ոբսերվերը» հարկադրված է 1928 թվականին ուղղակի սպանիչ բնութագրում տալու: «Իր նախորդների շարքում 1928 թվականը խփեց մի ուկորդ միայն—չիրականացած հույսերի ուկորդը», գրում է «Ոբսերվերը»: «Պատերազմից հետո բնակչության աշխատավոր մասն իր առաջ չի տեսնում վոչ պարզ ուղիներ, վոչ հավասարակշռություն յերկրի տնտեսության մեջ: Բնակչության աննշան փոքրամասնությունն է միայն, վոր աշխատում է ոգտադրած ստեղծված դրությունը հոգուտ իր շահերի:

Յերկրում պետք է չափազանց լուրջ դրություն ստեղծված լինի, և տիրապետող կուսակցությունը չպետք է վերջնականապես վարկաբեկված լինի, վորպեսզի նույն կուսակցության թերթը ընտրությունների նախորդելին այդ բովանդակությամբ հայտարարություններ անի:

«Մոշոր արդյունաբերության տեխնիկական հիմքը հեղափոխական է», գրում է Ֆր. Ենգելսը Դյուրինգի դեմ ուղղած իր գործում: Սակայն չնայած իր տեխնիկական հիմքի հեղափոխական բնույթին, նույն խոշոր արդյունաբերությունը կարող է տագնապի մեջ ընկնել, ճահճանալ և կործանվել յեթե հասարակական պայմանները դադարում են համապատասխանել նրա վերելքի նոր, ավելի բարձր աստիճանին, յեթե նրա վերելքին նպաստելու փոխարեն հասարական-քաղաքական պայմանները նրա համար սկսում են կապանքի

դեր կատարել, յիժե, հետևապես, տեխնիկայի բարձրագույն զարգացման հետ միասին հասարակական հարաբերություններին բնագավառում համապատասխան փոփոխում չի կատարվում: Ամեն մի արտադրություն հնարավոր է վորոշ հասարակական պայմաններում այդ արտադրություն պահանջներին համապատասխանող հասարակական հարաբերություններում միայն ինչպես Մարքսը գրում է «Կապիտալի» I հատորում (գլ. 23), ժամանակակից արդյունաբերությունն էլ «հասարակական կապերի և տեխնիկական գործելակերպի» (Verfahren) կապակցությունն է»: Բուրժուական ամբողջ աշխարհում և առանձնապես սուր կերպով Անգլիայում տեխնիկայի և հասարակական հարաբերությունների միջև ներդաշնակությունը վերացել է նրանց պատմական կապերը կտրվել են, և կապիտալիստական սխտեմի շարունակությունը դարձել է անհնարին:

Պահպանողականների պարտությունը մի սովորական ընտրական պարտություն չի և միայն Անգլիայի նկատմամբ չէ, վոր չափազանց կարևոր քաղաքական նշանակություն է ստանում: Այդ պարտությունը կապիտալիզմի աղբյուրն է անբուժելի ճգնաժամի, միայն պրոլետարական հեղափոխության միջոցով վերացվելիք հասարակական ներհակությունների և չերկբաբեռնվել բոլոր անկյուններում որ որի վրա ծավալվող և կապիտալիզմ ուղղած ազատագրական շարժումների անմիջական և անհրաժեշտ արդյունք է, իր կուսակցություն կրած խայտառակ պարտությունը քողարկելու համար Բուրժուիներ հայտարարում է, թե «ընտրական ճոճանակը թեքվել է», այսինքն զբաղվում է

ինքնախտաբեյությամբ և ուզում է ուրիշներին ել հանողել նրանում, վոր այդ պարտությունը մի պատահական չերեուլթ է, և վոր հաջորդ ընտրություններին պահպանողականները կվերականգնեն այժմ կորցրած շերտերը: Վոչ, պատասխանում է «Պարվրա»-ն իր առաջնորդներին մեկում (№ 123), «ճոճանակը չէ, վոր թեքվել է. Անգլիան, պառավ, մի ժամանակ չերտասարդացող Ս.ճգլիաճ է քեքվել և վոչ այն իմաստով, իհարկե, վոր Մակդոնալդի հաղթությունը նշանակում է կապիտալիստական Անգլիայի հիմքերի ցնցում: Վոչ մի դեպքում: Այլ այն իմաստով, վոր վերջին տարիներում բրիտանական իմպերիալիզմի տնտեսական հիմքերն ավելի ու ավելի քայքայվում էին, և վոր տնտեսական հիմքի տեղահանություն հետ միասին սկսել է որորվել նրա ամբողջ վերնաշենքը, բարդ և դարավոր վերնաշենքը: Իսկ յերբ վրա հասավ ընտրությունների որը, ճոճվեց նաև նրա պսակը՝ հին ու հպարտ պահպանողական կուսակցությունը»:

Պահպանողականներն, անգլիական ամբողջ բուրժուազիային հետ միասին, պատմականորեն դատապարտված են և արդեն իրենց ժահվան ազոնիայի շրջանն են աղրում: Իրենց դրությունը նրանք չկարողացան փրկել վոչ ուղմական պատրաստություններով ու հարձակողական քաղաքականությունով, վոչ անգլիական բանվորների ու գաղութային ժողովուրդների ճնշումով և վոչ հնդկական «վտանգի» կամ «բալչկիկյան վտանգի» առասպելներով: Նրանք տապալվեցին անգլիական պրոլետարիատի ձեռքով, բայց մեծ սխալ կլինեք կարծել, վոր նրանց միակ տապալողն անգլիական պրոլետարիատն էր: Վերջինը դուրս յեկավ ընտր

րական պայքարի, շրջապատված լինելով համաշխարհային համակրութեամբ. չէ՞ վոր պահպանողականները ջախջախմանն անհամբեր սպասում եյին տասնյոթորդականները, սպասում եր մարդկութեան յերկրորդը:

Պահպանողականների տապալումը վողջ անգլիական բուրժուազիայի տապալումն է և միաժամանակ նախադգուշացում է բոլոր յերկրների բուրժուական դասակարգերի համար: Յեթե իր ժամանակին Անգլիան հռչակվում եր Մարքսի կողմից վորպես «բուրժուական կոսմոսի դեմիոլոգ» («Դասակ. կռիվները Ֆրանսիայում», գլ. IV), և յեթե «Կապիտալ»-ում զարգացրած իր ուսմունքը Մարքսը լուսաբանում եր պլխավոր պես անգլիական իրականութունից վերցրած որինանհերով, ապա մեր որերում Անգլիան վոչ միայն դադարել է բուրժուական աշխարհի դեմիոլոգը լինելուց ալ և իր կործանման մոմենտին այնքան արագ քայլերով է մոտենում, վոր այսուհետև կարող է միայն բուրժուական կոսմոսի անխուսափելի քայքայման կործանման կլասսիկ որինակի դեր կատարել:

VI

Ազատամիտների քաղաքականութեան վրա կանխառնեք բոլորովին համառոտակի կերպով, վոր րոպիտակ այն ամենը, վոր ասված է պահպանողականների մասին, իր ուժն ընդհանուր առմամբ պահպանում է նաև ազատամիտների նկատմամբ: Այն կուսակցութուններն Անգլիայի յերկու հնագույն կուսակցութուններն — տորիների և վիգերի — շարունակելով իրենքն են, սակայն մասսայական բանվորական

շարժումները և կապիտալիզմի բարձր զարգացման հասած ձևերը համարյա ամբողջապես վերացրել են մի ժամանակ նրանց մեջ գոյութուն ունեցած սկզբունքային տարբերութունները: Արդեն 1842 թ., Անգլիայում տիրող հասարակական հարաբերութուններին նվիրած իր հոդվածներում, Ֆր. Ենգելսը հայտարարում եր, վոր տորիների և վիգերի միջև չարտիզմը սկզբունքային միանականութուն է առաջացրել («Письма из Англии», изд. 1923 г., стр. 14 и 18): Ենգելսի այդ հոդվածները հրատարակվելուց տաս տարի հետո, 1852 թ., սարլամենտական ընտրութունների ժամանակ նույն միտքն եր պաշտպանում չարտիզմի ամենահետևողական և լավագույն ներկայացուցիչներից մեկը — Երնեստ Զոնսը, վորն իր կրակոտ ճառերում անգլիական բանվորներին կոչ եր անում տորիներին և վիգերին հավասարապես ատելու և իրենց ձայներով չպահպանելու նրանց տիրապետութեան հիմքերը: «Ենչապես նրանց մեջ վորեք տարբերութուն չկա», ասում եր Զոնսը: Նրանք են «առաջացնում այն աղքատութունը, վորը նրանց համար ստեղծում է հարստութուն»:

Տորիների և վիգերի լավագույն բնութագրերը գտնում ենք Մարքսի հռչակավոր հոդվածներում, վորոնք 1852—1853 թ. թ. գետեղվում եյին «Նյու-Յորկի Տրիբունա» ամերիկական թերթում և այժմ տեղավորված են Մարքսի և Ենգելսի գործերի ժողովածուի X հատորում: Այստեղ գործ ունենք կուսակցութունների հետ, գրում է Մարքսը, վորոնք հրաժարվում են իրենց սեփական բնորոշ հատկանիշներից. լիբերալները քարոզում են պահպանողական գաղափարներ:

իսկ պահապանողականները—լիբերալ դադափարնե Առանձնապես ինչ վերաբերում է վիզերին, Մարքսը նրանց ուղղակի սպանիչ բնութագիր է տալիս: «Հաճ էին վիզերի ժողովուրդն ատում է չերկու դասակարգերին ել—արխատուհրատիային և բուրժուազիային ատում է իրեն ճշնող կալվածատիրոջը և իրեն շահագործող փողային աուզին», գրում է Մարքսը: վերջո պարզվում է բրիտանական վիզերի իսկակաբնույթը, վորպես այլազան տարբերի մի գզվի խառնուրդի. ճորտատեր-մալուստիականներ. փողային տոպրակներ՝ ավատական նախապաշարուններով. արխատուհրատներ՝ առանց պատվի զգացումունքի. բուրժուաներ՝ առանց արդուենաբերական փառասիրության սանամանափակ հետադիմականներ, վորոնք գործածում առաջադիմական ֆրազներ. առաջադիմականներ, վորոնք մոլեռանդ պահպանողականներ են. անֆորմիստներ, վորոնք պրոգրեսսից ոգավում են հոմեոպատիկ դոզաներով. ամեն տեսակի խնամիության (նեպոտիզմի) հովանավորողներ, բարոյական կալվածաւծման (կորրուպցիայի) մեծ վարպետներ. կեղծ բարեպաշտներ՝ կրոնի բնագավառում, տարտյուֆնեքադաքականության մեջ» (հջ 8):

Անգլիական այժմյան լիբերալները չեն կարող պործենալ նույնիսկ իրենց նախնիքով: Քաղաքական սուպես ու բարոյապես նրանք անսահման խճուկ սնանկ, սկզբունքներից կատարելապես դուրի ելին դեպի ահն ժամանակ, չերբ անգլիական կապիտալիզմն ի վերելքի ամենափայլուն շրջանն էր ապրում: Բոլորովին վարմանալի չե, ուրեմն, վոր կապիտալիզմի քաղաքայման շրջանում նրանց վիճակվում է Անգլիայի

հասարակական սալում հինգերորդ ական դերը կատարելու: Անգլիայի քաղաքական դեկը և պատասխանատու պետական պաշտոններն իրենց ձեռքում կենտրոնուցնելու համար պարլամենտական վերջին ընտրությունների ժամանակ նրանք ճգնում ելին ժողովրդական լայն մասսաների մեջ արմատացնելու այն համոզմունքը, վոր իրենք պահպանողականներից ավելի ձախակողմյան, ավելի դեմոկրատիկ, ավելի ժողովրդական են, սակայն, ինչպես այդ վկայում է վոչ միայն կոմմունիստական, այլ նաև բուրժուական մամուլն Անգլիայում, Ամերիկայում, Գերմանիայում և այլ կապիտալիստական չերկրներում—լիբերալներն իրենք ել իրենց հաշտարարություններին վորևե հավատ չեն ընծայում: Լիբերալները և պահպանողականները յերկուսն ել հավասար չափով կապիտալիզմի նոր նվաճումների և նրա պաշտպանության գործիքներ են, չերկուսն ել բանվոր դասակարգի շահագործողներ ու թշնամիներ, գաղութային ժողովուրդների դահիճներ, պատերազմական քաղաքականության ջատագոյներ, վերսալի դաշնագրի հեղինակներ, խորհրդային իշխանության և կոմիւնտեցիի վոխերիմ հակառակորդներ են և այլն և այլն: Գաղութային հեղափոխությունների և կոմմունիզմի կողմից նրանց կապիտալիստական գոյության սպառնացող և արդեն շոշափելի ձևեր ընդունած վտանգը ջնջել և այդ չերկու կուսակցությունների միջև մի ժամանակ գոյություն ունեցած տարբերությունը և նրանց չերկուսին ել միացրել և հակակոմմունիստական և ընդհանրապես հակահեղափոխական մի ընդհանուր պլանֆորմի շուրջը:

Բուրժուազիայի կողմից այնքան ներբողված լի-

բերալիզմի եյությունն ազատ առևտրի սիստեմն է մի սիստեմ, վորին անգլիական լիբերալներն—ամբողջ աշխարհի բուրժուազիայի հետ միասին—անվերջ կտնայել չեն չեն կարող, վտանգի չեն թարկելով իրենց գոյությունը: Իմպերիալիստական կապիտալիզմն արդյունաբերական կապիտալիզմի զարգացման բնական հետևանքն է: Արդյունաբերական կապիտալիզմի շրջանը բուրժուազիան կամ պետք է հրաժարվեր իր տնտեսության վերելքից, ուրեմն պետք է ընդհանրապես հրաժարվեր իր տիրապետությունից, կամ պետք է կապիտալիզմի իմպերիալիստական ձևերին անցնելու իսկ իմպերիալիզմի համար ազատ առևտուրն անհանդուրժելի լի: Իմպերիալիզմն ամենահեռուն գնացող կապիտալիստական մենաշնորհների և պետական իշխանության ծայրահեղ գործողացման մի դարաշրջանն է: Վորի ամրապնդումը բնականաբար պահանջում է, վոր ազատ առևտրին վերջ տրվի: Իմպերիալիզմի իդեոլոգիան, գրում է Հիլֆերդինգն իր գլխավոր գործում, «լիբերալիզմի իդեոլոգիային ուղղակի հակառակ է ֆինանսական կապիտալը ձգտում է վոչ թե ազատության, այլ տիրապետության: Նա չի սիրում, վոր անհատ կապիտալիստը պահպանի իր ինքնուրուշնությունը, նա պահանջում է այդ կապիտալիստի սամանափակում: Նա զգվանքով է վերաբերվում դեպի մրցման անարխիան և ձգտում է կաղմակերպման, իհարկե այն նպատակով միայն, վոր անընդհատ ընդլայնվող մասշտաբով մրցման կռիվ մղի» (գլ. 22): Պատմության այդ շրջանում, գրում է նույն հեղինակը, «մաքսերը բարձրացնելու ձգտումը դառնում է նույնքան անսահման, ինչքան անսահման է շահույթի ձգտումը» (գլ. 21):

Բուրժուազիայի աղատամիտ և դեմոկրատական խավերն իմպերիալիզմի շրջանում յետ են նահանջում, աջակողմյան բուրժուազիայի և կալվածատիրության հետ միասին իրենց համար ընդհանուր իդեոլոգիան մշակում, ընդհանուր քաղաքական դիժ են ընդունում: Անգլիայում այդ ձուլումը կատարվեց առանց վորեք խոշոր արդեւքների, վորովհետեւ մի կողմից կալվածատերերը վաղուց արդեն միաժամանակ նախոշոր կապիտալիստներ են դարձել և հաղարավոր թելերով կապված են համաշխարհային շուկայի հետ, իսկ ֆինանսական կապիտալի քաղաքականությունը նրանց համար ուղղակի փրկություն էր, մյուս կողմից՝ վորովհետեւ կապիտալիստների շարքերում կալվածատերերը վաղուց արդեն մի շատ նշանավոր տոկոս են կազմում, իմպերիալիստական կապիտալը մեծ արագությամբ տիրանում է խոշոր հողային տարածությունների, և իմպերիալիստական բուրժուազիայի համար ռենտային յեկամուտների տարբեր ձևերն սկսում են նույնքան խոշոր ու վճռական դեր կատարել, ինչքան և կալվածատիրության համար: Ել չենք խոսում այն մասին, վոր իմպերիալիզմի դարաշրջանում տիրապետող հանդիսացող ֆինանսական կապիտալն իր կամքն է թելադրում վոչ միայն շահագործվող, այլ նաև շահագործող բոլոր դասակարգերին, և բուրժուազիայի ամեն մի ֆրակցիա ինքն իրեն մահվան դատապարտած կլինի, յեթե փորձի շեղվելու այն ուղիներից ու քաղաքականությունից, վորն ընդգրկել է ֆինանսական կապիտալը:

Ահա ինչու անգլիական բուրժուազիայի յերկուհիմնական ֆրակցիաների մեջ վորեք լուրջ սկզբունք-

քայլին տարբերութիւնն չկա: Նրանք միևնույն նպատակին են ձգտում, միայն թե գործադրում են տարբեր տակտիկա, միևնույն գաղափարները պաշտպանում են տարբեր լեզվով: Նրանց դասակարգային շահերի տարբերութիւնն այնքան աննշան է, մասնավանդ կոմմունիզմի անընդհատ ուժեղացող վտանգ հանդեպ, վոր նրանց մեջ մղվող կռիվն ամբողջապէս պտույտ է գալիս փոքր խնդիրներին և պետական պատոնները զբաղեցնելու շուրջը: «Յերբ տորինները վերջնականապէս կտապալվեն, այն ժամանակ վիզերի համար էլ անպիտան պատմութեան մեջ տեղ չի լինիլ՝ զրում եր Մարքսը իր վերոհիշյալ հոդվածներէց մեկում (հատ. X, էջ 7): Այդ տողերը զբեւոց հետո անցել և ավելի քան յերեք քառորդ դար: Կապիտալի կալվածատիրութեան փոխադարձ կախումն այժմ այնքան է ուժեղացել, վոր կապիտալիստական բուրժուազիայի և վոչ մի Ֆրակցիա չի կարող կալվածատերերին տապալելու ձգտում ունենալ, չի կարող այնպատճառով մտնալանդ, վոր «բուրժուազիան Անգլիայում յերեք անբաժան իշխանութիւնն չի վալիւլած», ինչպէս զրում եր Ենգիլսը 1892 թ., «Ուտոպիայից դեպի գիտութիւն» իբ կլասսիկ գործի անգլիական հրատարակութեան առաջաբանում:

**

Անցյալ դարի 90-ական թվականներից հետո պահպանողականները և լիբերալները վերջնականապէս ձուլվում են, թեև ձևականորեն պահպանում են իրենց առանձին կուսակցութիւնները: Պարլամենտական ընտրութիւնների ժամանակ նրանցից ամեն մեկը

կը իր կառավարչական դիրքերը հաճուքով հանձնում է մյուսին, համոզված լինելով, վոր իր շահերին վորեն վտանգ, իր քաղաքականութեանը վորեն շեղում չի սպառնում: Ամբողջ աշխարհի Ֆիլիստերները դեռ այսոր ել պարմանք են հայտնում այն առթիվ, վոր այդ յերկու կուսակցութիւններին մեջ մղվող քաղաքական կռիվը, նույնիսկ իր ամենասուբ, ամենավճռական մոմենտներում, վերին աստիճանի կուլտուրական ձևերով է տարվում: Բուրժուական Ֆիլիստերներին կարծիքով, այդ կուլտուրականութիւնը պարլամենտական կարգերի բարձր զարգացումից է բղխում, նրա անսխալական արդշունքն է: Սակայն, ինչպէս տեսնում ենք, այդ պայքարի կուլտուրական յեղանակները և պահպանողականների ու լիբերալների միջև հաստատված հազվագլուտ բարեկամութիւնը պայմանավորվում են նրանց փոխադարձ տնտեսական-քաղաքական կախումով, պայմանավորվում են նրանցից ամեն մեկին համար ստեղծված գոյութեան դժվարին պայմաններով:

Իաշինքը բանվոր դասակարգի հետ և նրա կազմակերպութիւնների ուժեղացումն այն նախադրալն է, առանց վորի Անգլիայի տիրապետող կուսակցութիւններից և վոչ մեկը մյուսին դեմ լուրջ կովի ձեռնարկել չի կարող: Բայց պրոլետարիատի միջոցով նրանցից մեկին կամ մյուսին ուժասպառ անելը կատարյալ անստեղծութիւն է, վորովհետև զրանով թուլանում են պրոլետարիատի թշնամիներին շարքերը, իսկ պրոլետարիատի ձգտումը վոչ թե շահագործող դասակարգերից մեկին կամ մյուսին, այլ նրանց բոլորի կործանումն է: Արտաբուստ մեկը մյուսին դեմ կովելով,

այդ վերկու կուսակցութունները փաստորեն մշտական դաշինք ունեն կնքած, վորն ամբողջապես ուղղած է բանվոր դասակարգի դեմ: Իսկ վերջին հարցուր տարում բանվոր դասակարգն Անգլիայում մի այնքան խոշոր ուժ է ներկայացնում, վոր վոչ մի կառավարութուն չի կարող նրան հաշվի չառնել, նրա հեղափոխական շարժումը կանգնեցնելու համար չի կարող նրան այս կամ այն զիջումը չանել, նրա ձայները շահելու համար չի կարող նրա պահանջներին գեթ մի քիչ ընդառաջ չզնայլ և միաժամանակ՝ չի կարող նրան չխաբել, նրան խոստումներով չկերակրել, նրա գիտակցութունը չմթաղենել, նրա դասակարգային կազմակերպութունները չքայքայել:

Վերջին ընտրութուններին լիբերալները հանդես յեկան մեծազորդ խոստումներով ու սոցիալական բարենորոգումների խոշոր ծրագրերով, վորոնք—ինչպես պնդում էյին նրանց ներկայացուցիչներն—ուղղած էյին ընդգեմ պահպանողականների և նպատակ ունեյին բարելավելու բանվոր դասակարգի դրութունը՝ ներքին քաղաքականության բնագավառում այդ խոստումներից ամենակարևորն այն էր, վոր լիբերալները պարտավորվում էյին գործադրութունը կրճատելու չերեք քառորդով և իրենց ագիտացիային այդ ասպարիզում այնպիսի բնույթ էյին տալիս, կարծեք գործադրության պատճառը միայն պահպանողականների քաղաքականութունն է չեղել, կարծեք իրենք վորեն առնչութուն չեն ունեցել յերկրի գոյության տնտեսական ու քաղաքական այն պայմանների հետ, վորոնք գործադրության հսկայական աղբյուրն են ներկայացնում: Գործադրիչների թիվն այժմ բարձրացել

է մինչև յերկու միլիոն, իսկ արդունաբերության առանձին ճյուղերում կազմում է բանվորների ընդհանուր թվի 20—27% (պողպատի ձուլարաններում 21%, քարածուխի արդյունաբերության—24%, նավաշինարարության—26,5% և այլն): Այդ թվերի նշանակութունը հասկանալու համար պետք է իմանալ վոր պատերազմից առաջ գործադրութունն Անգլիայում հավասար էր 2—4%, բարձրանալով 1893 թ. մինչև 7,5%, 1886 թ.՝ մինչև 10,2% և 1879 թ.՝ մինչև 11,4%:

Գործադրության դեմ կռվելու այս ծրագրին իրականացնելու համար Լ. Ջորջն առաջարկում էր անմիջապես մի շարք խոշոր շինարարական աշխատանքների ձեռնարկել, վորոնք անգլիական կառավարութունից առաջիկա 2-3 տարում պահանջելու էյին 300~350 միլիոն ֆունտ-ստերլինգ, այսինքն մի գումար, վոր նույն նպատակներով Անգլիան կարող է ծախսել 20 տարվա ընթացքում միայն: Հինց լիբերալների շարքերում այս ծրագրի իրականացման վոչվոք չէր հավատում, իսկ հակառակորդ կուսակցութունները Լ. Ջորջի այդ առաջարկը վորակում էյին վորպես ավանտյուրա, ցուցց տալով, թե նման մի ծախս կատարելու դեպքում ինչքան կտուժեն Անգլիայի արդյունաբերութունը, ֆինանսները և հատկապես նրա միջազգային քաղաքականութունը: Ընտրութունների շրջանում լիբերալները լույս են ընծայել մի բրոշյուր՝ «Մենք կարող ենք հաղթահարել գործադրութունը» վերնագրով, սակայն ամենքի համար պարզ էր, վոր գործադրության խնդիրը լիբերալների համար լոկ մի զեմք էր, վորից ոգավելով նրանք ուզում էյին բանվորական մասսաներին մի անգամ ել խաբել և նրանցից մի քանի միլիոն քվե ստանալ:

Լիբերալների չերկրորդ հիմնական նշանաբանը խաղաղության պահանջն էր: Ինչքան էլ անհիմն էր գործազրկության դեմ կռվելու նրանց ծրագրերը, բայց այդ վերջինին մասսաներն ավելի ելին հավատ ընծայում, քան նրանց խաղաղասիրական հավաստիացումներին: Այս չերկրորդ նշանաբանն էլ բացառապես ձայներ շահելու մի միջոց էր, քանի վոր ներքին և արտաքին քաղաքականություն մեջ, պատերազմի և խաղաղության այն բոլոր խնդիրներում, վորոնք վերաբերում են թե բանվոր դասակարգին ու գաղութային ժողովուրդներին և թե համաշխարհային շուկայում Անգլիայի հետ մրցող առաջավոր կապիտալիստական պետություններին, ինչպես և խորհրդային իշխանությունը, պահպանողականների և լիբերալներին միջև վորևե սկզբունքային տարբերություն չկա:

Վերջին մոմենտին միայն, յերբ ընտրական պայքարի ընթացքում լիբերալների համար պարզվեց, վոր իրենք պարտվելու յեն, նրանք առաջ քաշեցին ընտրական սիստեմի դեմոկրատացման պահանջը, սակայն կասկածից դուրս է, վոր հետևողական կերպով այս պահանջը պաշտպանել նրանք չեն համարձակվել վորովհետև նրա իրականացումից բանվոր դասակարգը շատ ավելի լայն չափերով կոզալի, քան իրենք լիբերալները: Ընտրական իրավունքի անհեթեթություններին շնորհիվ է, վոր 1924 թ. ընտրություններին պահպանողականները համայնքների պալատում ստացան տեղերի 68⁰/₀, այնինչ նրանց պատգամավորները շահել էին ձայների 45⁰/₀ միայն: Այժմ լիբերալներն ստացան ձայների 23⁰/₀, բայց պատգամավորական տեղերի 9⁰/₀ միայն: Ամեն մի պատգամավոր ընտրված է

95.000 ձայնով—լիբերալների մոտ, 33.500 ձայնով պահպանողականների մոտ և 29.000 ձայնով—բանվորական կուսակցություն մոտ: Բանվորների համար ստեղծած այս ընտրական սիստեմն այժմ հարվածում է իրենց լիբերալներին, բայց և այնպես նրանք դժվար թե համարձակություն ունենան կռվելու այդ սիստեմի դեմ:

1924 և 1929 թ.թ. պարլամենտական ընտրությունները ցույց են տալիս, վոր Անգլիայի հասարակական-քաղաքական կյանքում այժմ յերկու հիմնական ուժ կա—բանվոր դասակարգը և պահպանողականները: Լիբերալները դատապարտված են կատարել անգործության, այնպես վոր անգլիական պրոլետարիատի հիմնական խնդրերը պահպանողականների տապալումն է: Ինչպես վերը տեսանք, արդեն 1852 թ. Մարքսը գտնում էր, վոր Ելբը տորիները վերջնականապես կտապալվեն, այն ժամանակ վիգերի համար էլ անգլիական պատմության մեջ տեղ չի լինիլ: Լիբերալների յերգն արդեն յերգված է: Պահպանողականներին նոր ու նոր զիջումներ անելու և նրանց առաջ վերջնականապես գլուխ խոնարհելու գնով է միայն, վոր առաջիկայում նրանք կարող են իրենց դոյությունը փրկել և իրենց խախտված դիրքերն ավելի կամ պակաս չափով ամրապնդել:

VIII

Անցնում ենք բանվորական կուսակցությունը, վորը պատերազմից հետո չափազանց ուժեղացել է և Անգլիայի հասարակական-քաղաքական կյանքում շատ խոշոր դեր է կատարում: Չայների այն քանակը,

վոր վերջին յերեք ընտրությունների ժամանակ ստացել են Անգլիայի յերեք խոշորագույն կուսակցությունները, անվիճելի ապացույց է այն բանի, վր ընտրողների մասսան ձախացել է: Պարլամենտական այ յերեք ընտրություններին մասնակցած քաղաքացիների ձայներն ըստ կուսակցությունների այսպես է բաժանվում.

	1923	1924	1929
Պահպանող	5,5	8,0	8,5 միլիոն
Լիբերալներ	4,3	2,9	5,2 »
Բանվ. կուս.	4,3	5,5	8,3 »

կանանց ընտրական իրավունքն ընդլայնելու հետո ընտրողների թիվը՝ անհեց 5,1 միլիոնով, բարձրանալով մինչև 28 միլիոն: Գլխավորապես այդ պատճառով է, վոր վերջին ընտրություններին 5,6 միլիոն մարդ ավելի յեր մասնակցում, քան 1924 թ. ընտրություններին: Ինչպես տեսնում ենք, պահպանողականների ստացած ձայների թիվը մնացել է համարյա անփոփոխ, այնինչ լիբերալները 2,3 միլիոն և բանվ. կուս. 2,8 միլիոն ձայն ավելի յեն ստացել, քան 1924 թվականին: Անգլիայի բնակչության 83% վարձու աշխատանքով ապրողներ են: Պարզ է, վոր միլիոնավոր բանվորներ իրենց շահերի պաշտպանությունը դեռ ախոր բլ հավատում են պահպանողականներին լիբերալներին, բայց նույնքան պարզ է, վոր վերջին ընտրություններին միլիոնավոր բանվորներ, պահպանողականների քաղաքականությունից հիասթափվելով իրենց ձայները լիբերալներին և բանվորական կուսակցությանն են ավել, դեռևս անվերջ այն իլլու-

զիայով, վորպես թե այս վերջին կուսակցությունները ընդունակ են իրենց շահերն ավելի լավ պաշտպանելու, քան պահպանողականները:

Այս փաստը քաղաքականապես անսահման կարևոր է, վորովհետև 19-րդ դարի ընթացքում Անգլիայի ամբողջ բանվորությունն իր շահերի պաշտպանությունը հավատացել է մերթ պահպանողականներին, մերթ լիբերալներին, գուրկ լինելով իր դասակարգային կուսակցությունից և սեփական ներկայացուցչությունից պարլամենտում: Ներկա դարի սկզբում է միայն, վոր Անգլիայի բանվորությունը պարլամենտ է ուղարկում իր ներկայացուցիչներին, ընտրություններին ժամանակ հաջողեցնելով անցկացնել 5 հոգի 1900 թ., 29 հոգի—1906 թ. և 42 հոգի—1909 թ.: 1929 ընտրություններին մասնակցող քաղաքացիների ձայների 37% և ստեղծեց համայնքների պալատի ամենախոշոր Ֆրակցիան (287 անդամ):

Բանվորական մասսաների աչքում պահպանողականներն արդեն վարկաբեկված են, այսինքն Անգլիայի այդ ամենահին ու ամենազորեղ կուսակցության համար բանվորական լայն մասսաների վրա հենվելն համար բանվորական է դառնում: Պարլամենտական վերջին ընտրությունների ամենակարևոր դրական արդյունքներից մեկը հենց այդ է: Բանվորական արդյունքներից բնութագրական գերությունն սկսում է ադատադրվել բուրժուական գերությունից, և այժմ ամբողջ հարցն այն է, թե այսուհետև վոր կուսակցությանն է հետևելու: Անգլիական բանվորական քաղաքական պատմությունը նկատի ունենալով, նրա հեռանալը պահպանողականներից

պետք է մի խոշոր առաջադիմական քայլ համարել բոլորովին անկախ այն հանգամանքից, վոր նրա շարքերում լիբերալիզմը դեռ չափազանց ուժեղ է, և վոր այդ պատճառով միլիոնավոր բանվորների մեջ բանվորական կուսակցութունը դեռևս մեծ հեղինակութուն է վայելում:

Անտարակույս, բանվորական կուսակցութունն իրավունք ունի պարծենալու այն հաղթութուններով, վոր տարիկ է հետպատերազմյան տարիներում, բայց հարց է ծագում, թե այդ հաղթութուններից նա ինչպես է ոգավելու և նրա հեղինակութունը բանվորության շարքերում ինչքան յերկարատև կարող է լինել: Այդ կուսակցության ամբողջ անցյալը, նրա ծրագիրը և նրա վերջին ընտրական պլատֆորմը կասկած չեն թողնում նրանում, վոր անգլիական պրոլետարիատի քաղաքական արթնացման և ընդհանուր ակտիվացման դարաշրջանում բանվորական կուսակցությանն ամենամոտ ապագայում նույն վիճակն է սպասում, վորին պահպանողականներն արժանացան 1929 թ. ընտրութուններին:

Բանվորական կուսակցութունն Անգլիայի կապիտալիստական ուժերի պահպանության մի գործիք է, Յեթե այդ կուսակցութունն իրոք բանվորական լինելը, Անգլիայում քաղաքական կռիվ կսկսվել վոչ թե ընտրութունների հետևանքը պարզվելուց հետո, այլ արդեն մինչև ընտրութունների որը, չէր բանվորական կուսակցության հաղթութունը դեռ նախատեսվում եր միայն: Մակդոնալդի կուսակցութունը բանվորական հռչակելու համար պետք է նախապես ընդունել վոր Անգլիայում չկա կազմակերպված բուր-

ժուսակիա, վոր այդ բուրժուսական իր շահերը պաշտպանելու ընդունակութունից իսպառ զուրկ է: Բանվորական կուսակցութունն իշխանության գլուխ է անցնում, և բուրժուսակիան բոլորովին չի անհանդուրստացնում այն միտքը, վոր նոր իշխանութունն իրեն կարող է զրկել սեփականութունից և տիրապետութունից:

Մի տարրինակ բանվորական կուսակցութուն, վորի իշխանության հետ բուրժուսական կապիտալիզմի ամբապնդման մեծամեծ հույսեր է կապում: Լիբերալ թերթերն անընդհատ պնդում են, վոր բանվորական կուսակցության քաղաքականության մեջ կարիքն չէ գտնել ամեն ինչ, բայց վոչ հեղափոխական ծախսեր հեղափոխականներ, և վոր իրենց համար կոմիկական պրոլետուն են ստեղծում այն պահպանողականները, վորոնք ձգտում են բանվորական կուսակցութունը հեղափոխական հայտարարել, վորպեսզի այդ ճանապարհով կանգնեցնեն իրենց շարքերի քայքայման պրոցեսը: «Թայմսը» գտնում է, վոր բանվորական կուսակցության հաջողութունը պայմանավորված է նրա ծրագրի չափավոր բնույթով, իսկ անգլիական բուրժուսակիայի այդ տարրինակ սառնասրտության և հանգստության գաղտնիքը բացում է Պարիզի բուրսայի որդանը, հայտարարելով, վոր «բանվորական կուսակցութունն իշխելու չէ ձևականորեն միայն և վոչ թե իսկապես: Սոցիալիզմի այս նոր փորձը խառնած վարդաշրի հետ, սպառնալից վոչինչ չի ներկայացնում: Անգլիայի ներքին և արտաքին քաղաքականության հիմունքները կմնան անփոփոխ: 1929 թ. վականին ֆունտ-ստերլինգի կուրսը փորձությանը

նույնպես կղբմանա, ինչպես դիմացավ 1924 թվականին»։ («Աժանս եկոն. և ֆին.»)*։ Այս պատճառով ահա, վոր «սոցիալիստները» հաղթությունն ընդունվեց անվրդով և հանգիստ կերպով վոչ միայն սնդիլական ֆունտի և ֆրանսիական ֆրանկի, այլ և ամբրիկական դոլլարի ասպետները կողմից, վորոնց սովորաբար վոչ թե նյարդացնում, այլ ուղղակի գաղազեցնում և բռնավորական շարժման ամեն մի հաջողություն, ինչքան ել վերջինն աննշան լինի և վորտեղ նա կատարվի։

IX

Իրեն սված այդ գնահատականների դեմ բանվորական կուսակցությունը վոչ միայն չի բողոքում, այլ խոսքով ու գործով ապացուցում և նրանց ճշմարտությունը և իր ղեկավարների բերանով ամեն քայլափոխում հայտարարություններ և անում, վորոնց միանշապատակն է՝ արդարացնել բուրժուազիայի կողմից պեպի իրեն տածած հավատը և հույսը և փարատել ամեն մի սարակուսանք իր չենթադրյալ հեղափոխականության մասին։ Այս տեսակի հավաստիացումներ անելու բնագավառում բանվորական կուսակցությունը մի յեզակի կազմակերպություն և։ «Մենք դասակարգային կուսակցություն չենք», հայտարարում ել ընտրությունների նախորելին Մակդոնալդը, ճգնելով ապացուցել, վոր դասակարգային են պահպանողականները։ Ինչպես հայտնի յե, կուսակցությունների դասակարգային եյությունն ամենուրեք ժխտում են վոչ

* Այս քաղվածքները վերցրած են ուսական թերթերից՝

թե սոցիալիստները, այլ բուրժուազիայի իդեոլոգները։ Այս վոչ այնքան հաճելի պարտականությունն անգլիական բուրժուազիան փաթաթել և Մակդոնալդի և ընկ. վզին։ Իր ընտրական մանիֆեստում բանվորական կուսակցությունը հայտարարում և, վոր գոյություն ունեցող բուրժուական հասարակարգի և նրա «դեմոկրատական սկզբունքների» նկատմամբ միանշապատակ լոյալ է։

Բանվորական կուսակցությունն ինքն իրեն դասակարգային չի համարում, վորովհետև ընդդեմ կապիտալի կռվելու փոխարեն՝ ճգնում և պրոլետարիատի միջոցով, պրոլետարիատի դասակարգային շահերի վաճառման գնով ամբապնդելու կապիտալի գերքերը։ Յեվ պրոլետարիատի գոյություն պայմանների բարելավումը, և՛ արտադրության ազատագրումն աշխարհի կաշկանդող կապանքներից հնարավոր են՝ բուրժուազիայի տապալման և սոցիալիստական կարգերի հաստատման միջոցով միայն, իսկ բանվորական կուսակցությունը ծրագրում և Անգլիայի անտեսությունն ազատագրել ճգնաժամային ուժերից և այն զարգացման մի ավելի բարձր աստիճանի հասցնել սեֆորմիստների փայտյած այն հրաշագործ միջոցով, վորը կոչվում և «խաղաղություն արդյունաբերություն մեջ», «համերաշխություն և գործակցություն կապիտալիստները հետ», վորը վերջերս «մոնդիզմ» անունն և կրում, և վորի նպատակն և «բարձրացնել անտեսական ընդհանուր բարեկեցությունը» (Մակդոնալդ)։ Իր ընտրական մանիֆեստում բանվորական կուսակցությունը պնդում և, վոր «ինքը վճռականապես կռվում և ընդդեմ բունության, ընդդեմ հեղափոխական դրավումների և

ընդդեմ կոնֆիսկացիայի, վորպես նոր հասարակարհային հաստատելու յեղանակներն»:

Տասնյակ տարիներ ընթացքում իրենց գործունեյությամբ սեֆորմիստներն ապացուցել են, վոր իրենց ուժերից վեր ե ըմբռնելու այն միտքը, վոր կապիտալիզմի այժմյան ծանր դրությունը հեռանալու բուժուական կարգերի, և վոր ճգնաժամերից ու պատերազմներից ազատագրվելու միակ միջոցն այդ նույն բուժուական կարգերի վերացումն է: Անգլիայի արժու անությունը զարգացման մի ավելի բարձր աստիճանի հասցնելու տեսակետից բանվորական կուսակցությունը բուժուական կուսակցություններից վոչնչով չի տարբերվում: Նրա ընտրական ծրագրի միակ կարևոր կետը քարածուխի արդյունաբերության ազգայնացման պահանջն է, սակայն հաստատ կարելի չե ասել, վոր Մակդոնալդի կառավարությունը համարձակութուն չի ունենա այս կետը կիրառելու, իսկ մյուս կողմից, արդյունաբերության այդ ճյուղն այնքան ծանր դրություն է ապրում, վոր բանվորական կուսակցության այդ պահանջը պարլամենտին առաջադրելու և իրականացնելու ձեռներեցությունը վորոշ պայմաններում կարող են իրենց վրա վերցնել հողատերերն ու կապիտալիստները, քանի վոր բանվորական կուսակցության պահանջը մոտ ապագայում նրանց համար փրկության միակ միջոցն է դառնալու:

Պետք է նկատի առնել, վոր— համաձայն իր սեֆորմիստական սկզբունքների— բանվորական կուսակցությունը պահանջում է քարածուխի արդյունաբերության ազգայնացում կատարել վոչ թե կոնֆիսկացիայի միջոցով, այլ հողատերերին և կապիտալիստ-

ներին լիովին վարձատրելու յեղանակով: Հողատերերն ու կապիտալիստներն ամենամոտ ապագայում կարող են շահագրգռված լինել իրենց այդ սեփականությունից հրաժարվելու և վարձատրություն ստանալու, յերբ արդեն հասունացած կլինի նրանց սեփականազրկման մոմենտը, կամ յերբ քարածուխի արդյունաբերությունն այնքան ծանր վիճակի մեջ կընկնի, վոր նրանց համար շահավետ կլինի անգլիական ամբողջ ժողովրդից ստանալու միջանի հարյուր միլիոն և նրան հանձնելու արդյունաբերության մի ճյուղ, վորը վերականգնելու և ռացիոնալ հիմունքների վրա դնելու համար նոր հարյուրավոր միլիոններ կպահանջվեն: Բանվորական կուսակցության այս պահանջը գործին անտեղյակ մարդկանց կարող է շատ հեղափոխական թվալ, սակայն իր ելույթյամբ այդ պահանջը վոչ այլ ինչ է, բայց չեթե սոցիալիզմի հետաձգում և միաժամանակ անգլիական բանվորական ու սպառող ամբողջ մասսայի անտեսական ու քաղաքական ստրկացում շահագործող դասակարգերին:

Յեթե այս նույն պահանջն առաջադրվի հանքատերերի և կապիտալիստների կողմից, աշխատավոր մասսաներին իսկույն կպարզվի, թե ազգայնացման այդ յեղանակն ինչքան ծանր հարկ է և իրենցից ինչ նոր դոհաբերություններ է պահանջում: Այս կոնկրետ որինակի վրա դժվար չի հասկանալ, թե բանվորական կուսակցությունը բուժուազիայի համար ինչքան ոգտավետ ու անփոխարինելի չե: «Հանուն սոցիալիզմի» յերկարացվում է հողատերերի և կապիտալիստների գոյությունը. «հանուն սոցիալիզմի» սոցիալիզմը մի անլուր Ֆալսիֆիկացիայի յե յենթարկվում: Իսկ

հասկանալի չե, վոր այս ձևի քաղաքականութիւնը կարող ե վարել մի բուրժուական կուսակցութիւն միայն, վորը հանդես ե գալիս, քողարկվելով սոցիալմի ազատագրական դրոշով: «Իշխանութիւնը հնի դեռ սեփականատեր դասակարգերի ձեռքում, ամեն մի պետականացում նշանակում ե թե շահագործման վերացում, այլ նրա ձևի փոխում», գրում եր Ենգելը Բեբելին 1891 թ.:

Այս ամենից պարզ ե, վոր գործազրկութիւնը կապիտալիստական ռացիոնալացման դեմ ել բանական կուսակցութիւնն անզոր ե արմատական կռիւնով: Ընտրական կամպանիայի ընթացքում պայանողական ե լիբերալ թերթերը շատ հաճախ հարաբերութիւններ եյին անում այն իմաստով, վոր բանվորական կուսակցութիւնն առաջադրած պահանջների մեջ չկա մեկը, վորի տակ իրենք ել չստորադրվին, վորն իրենց համար ընդհանրապես անընդունելիներ: Առանձնապես ինչ գործազրկութիւնն ե վերջերում, նրա մեղմացման համար լիբերալները ապիկի բովանդակալից ու շատ ապիկի արմատական ծրագիր եյին ներկայացրել, քան բանվորական կուսակցութիւնը:

Գործազրկութիւնն ընդունած սպառնալից բնութի շնորհիվ ե, վոր ընտրական պայքարի շրջանում արտաքին քաղաքականութիւնն խնդիրները ե հաստատակապես Խորհրդային Միութիւնն հետ բարեկամական հարաբերութիւններ հաստատելու խնդիրներն այլ քան կարևորութիւն, այնքան սուր կերպով ընդունեցին: Բանվորական մասսաները բնագործազրկում են, վոր արդյունաբերութիւնն հարատե

ժամը վերացնելու ամենահիմնական միջոցը միջազային քաղաքականութիւնն խաղաղ ձեւերն են, վոր անհրաժեշտ ե բարեկամական հարաբերութիւններ ստեղծել թե խորհրդային իշխանութիւնն հետ ե թե կապիտալիստական ու գաղութային յերկրները հետ, բայց նրանք չեն գիտակցում, վոր այս բոլոր դեպքերում խաղաղ քաղաքականութիւնը բուրժուազիւնը համար անհնարին ե, ե վոր բանվորական կուսակցութիւնը հենց այդ բուրժուազիւնի շահերի արտահայտիչն ու պաշտպանն ե:

Բանվորական կուսակցութիւնն տարած հողթութիւնն հիմնական պատճառը հենց այն ե, վոր նա խոստանում եր Խորհրդային Միութիւնն հետ անմիջապես բարեկամական դաշինք կնքելու: Սակայն նրանց այդ խոստումների արժեքը չափազանց նսեմանում ե նրանով, վոր մեզ հետ բարեկամական դաշինք կնքելու համար պահանջներ են առաջադրում, վորոնք իրենցից առաջ պաշտպանվել են պահպանողականների կողմից: Այսպես, որինակ, Թոմասը պայման ե դնում, վոր հարաբերութիւնները մեզ հետ սկսվեն այն դեպքում միայն, յետե «ոռոսական պրոպագանդին» վերջ կդրվի, իսկ Մակդոնալդը հայտարարում ե, վոր անգլիական պահպանողականների ե բայելիզմի մեջ վորակ տարբերութիւնն չկա: Խորհրդային իշխանութիւնն հետ բարեկամական հարաբերութիւններ հաստատելու անհրաժեշտութիւնը պահպանողականներն ել լավ գիտակցում են, բայց նույնպես պահանջում են, վոր «ոռոսական պրոպագանդին» վերջ տրվի, այսինքն՝ վոր Խորհրդային իշխանութիւնը դադարի խորհրդային իշխանութիւնն լինելուց: Այս կարևոր խնդրում ել,

ինչպես ահանում ենք, Մակդոնալը պահպանողականներին ե հետևում: Յեթե պրոլետարական մասսաները կողմից նրա կառավարութան վրա ճնշում չգործադրվի, Մակդոնալըն այս կետում դժվար թե բարի ցանկություններից այն կողմը գնա, իսկ մեզ հետ հարաբերությունների մեջ մանելուց հետո դժվար թե ընդունակ լինի այդ հարաբերությունները հաստատուն հիմունքների վրա դնելու:

Բանվորական կառավարությունից գաղութները ել վորևե սպասելիք ունենալ չեն կարող: 1924 թվականին, առաջին բանվորական կառավարության շրջանում, գաղութների նկատմամբ շարունակվում բուրժուազլայի ռեակցիոն ու նվաճողական քաղաքականությունն, իսկ Մակդոնալըն անամոթաբար պահանջում էր, վոր գաղութային ժողովուրդները վերջինս ամեն մի հեղափոխական շարժման, վորովհետև ասում էր նա—այդ ճանապարհով մեզանից վոչինչ չեք ստանալ: Իր ընտրական մանիֆեստի համապատասխան կետում բանվորական կուսակցությունը այժմ հայտարարում է, վոր գաղութային քաղաքականության մեջ ղեկավարվելու յե Ազգերի Լիգայի սկզբունքներով և ձգտելու յե, վոր գաղութային ժողովուրդների համար «ապահովված լինի աշխատանքի հնարավորությունը»: Այս յերկու խոստումն էլ ստըրկություն կուսության ուժեղացում են նշանակում: Ազգերի Լիգայի միակ սկզբունքը կապիտալիստական սիստեմի պահանջումն է, իսկ կապիտալիզմը ժողովրդական լայն մասսաների շահագործում և ստրկացում է պահանջում: Հետևապես, Ազգերի Լիգայի սկզբունքները յերակետ ընդունելով, Մակդոնալը Հնդկաստանին և Անգլիայի

ալլ գաղութներին կրկին կախողան ու թնդանոթ ե խոստանում, յեթե նրանք համարձակվեն կապիտալիզմ գլուխ բարձրացնելու: Ինչ վերաբերում է «աշխատանքի հնարավորությունն ապահովելու» խոստումին՝ առանց խոսելու աշխատանքի հասարակական պայմանների մասին, ապա մարքսիզմի այբբենն իմացող ամեն մի բանվոր ձեզ կբացատրի, վոր համաձայն այդ ֆորմուլայի՝ աշխատավոր ժողովրդի համար կարելի յե միայն կապիտալիստական բանտ ստեղծել, ալլ և նրանց վզին ստրկության ու ճորտության շղթաներ կաթաթել: Չե՞ վոր ստրկության և ճորտության դաշտերում շահագործվողներն աշխատանքով ավելի էյին ապահովված, քան կապիտալիզմի դարում:

1928 թվականին Անգլիայի լիբերալ թերթերից մեկը բանվորական կուսակցությանը մեղադրում էր վազելատում, ապացուցելով, վոր նրա ծրագրի կետերի մի նշանավոր մասը փոխ է առած լիբերալների ծրագրից: Յեթե լիբերալ թերթն անկեղծ լիներ, հարց կտար այն մասին, թե բանվորական կուսակցության առանձին գոյությունն ի՞նչ իմաստ ունի, սակայն վոչ լիբերալները և վոչ պահպանողականները նման հարց չառաջարկել չեն կարող, վորովհետև բանվորական կուսակցության գոյությունն իմաստը նրանց ավելի յե հայտնի, քան Մակդոնալին և ընկ.: Անգլիական բուրժուազիան ներկա դեպքում ինքնախաբեկության միջոցով հայտնի, քան Մակդոնալը չի կարող: Նա իմանում է, վոր բանվորական կուսակցությունն իր գործակալն է այն բոլոր դեպքերի համար, յերբ միայն սեփական ուժերով, միայն կովի սեփական յեղանակներով անընդունակ է

բանվորներին խաբելու և կրկին իրեն լինթալու:

X

Ինչպես պատահեց, վոր բուրժուազիայի տիր պետութեան պայմաններում յերկրի կառավարչական կեն անցավ բանվորական կուսակցութեան ձեռքը:

Նախ պետք է նշել, վոր անգլիական բուրժուազիան դեռ այնքան զորեղ է, վոր չեթե բանվորական կոչվող այդ կառավարութունը կապիտալիզմի հաստատութեան վտանգ ներկայացներ, բուրժուազիան նրա առջացումը կդարձներ անհնարին և հարկ յեղած դեպքում կանգ չեր առնի քաղաքացիական կռիւի ամեն դաժան, ամենավայրագ յեղանակների առաջ: Պարզ մենտալիզմը բուրժուազիայի տիրապետութեան գործիք է, այնպես վոր պրոլետարիատի դասակարգական տեսակետի վրա կանգնած բանվորական կառավարութեան առաջացումը պարլամենտարիզմի հողի վրա պարլամենտարիզմի թագավորութեան պայմանները պետք է ընդհանրապես անհնարին համարել: Բնական չե ասել, վոր նման լինթալութուն անհնար պետք է զուրկ լինել դասակարգային տեսակետից: Կարևորը մեզ համար այն է, վոր այդպես դատողները—գիտակցաբար թե անգիտակցաբար—բուրժուազիայի գործին են նպաստում, բուրժուազիայի մոտ գործակալի դեր են կատարում: Մասսաները խաբելը և նրանց ինքնախաբեցութեամբ զրազեցնելը պարլամենտարիզմի պայմաններում շատ ավելի հեշտ է, քան շահագործման և պետական ճնշման նախնական ձևերից վորևէ մեկի պայմաններում:

Մարքսը, Ենգելսը և Լենինն անընդհատ շեշտ

են այն մտքի վրա, վոր պարլամենտարիզմը ժողովրդական լայն մասսաներին շահագործելու, ճնշելու և խաբելու մի միջոց է, վոր ընդհանուր ընտրական իրավունքը և պետութեան հանրապետական ձևն ելնրա դասակարգային ելութունն այդ տեսակետից փոփոխման լինթալիզմ չեն կարող: «Բարեպատեն պայմաններում—գրում եր, որինակ, Ենգելսը 1888 թվականին—ընդհանուր ընտրական իրավունքը կարելի չի դարձնել մասսաների ճնշման մի գործիք» («Сила и эк. в образ. Герм. имп.», стр. 24): Դասակարգային հասարակութեան կառուցվածքի մասին պետք է շատ մոլար կարծիք ունենալ, լինթալիզմը համար, վոր իր դիրքերում ամուր կանգնած բուրժուազիան առաջացումը և գոյութունը, կամ վոր իսկական բանվորական կառավարութունը կարող է անսասան թողնել կապիտալիզմի հիմունքները:

Անգլիայի բանվորական կառավարութունն իրոք բանվորական համարողները մեղանշում են տրամաբանութեան ամենատարրական պահանջների նկատմամբ: Չէ վոր այդ պարոնները լուրջալայն ընդունում են վոչ ավելի և վոչ պակաս, քան այն, վոր բուրժուական հասարակարգը և բուրժուական պետութունը միաբանելի չեն բանվորական կառավարութեան հետ, այսինքն վոր պետութունը կարող է բուրժուական աշխարհը լիակ կառավարութունը—բանվորական: Սակայն դասակարգային տեսակետի վրա կանգնած ամեն մի բանվորի համար ակսիոմայն է, վոր պրոլետարական կառավարութեան առաջացումով պրոլետարական պետութուն է ստեղծվում, վոր պրոլետարական կառա-

վարությունը կարող ե գոյություն ունենալ և գործնապարհական պետութեան մեջ միայն, և վոր իր կառավարութեանն ու պետութեանն ստեղծելու համար պրոլետարիատը նախ պեաք ե կործանի բուրժուական կարգերը, բուրժուական պետութեանն ու կառավարութեանը: Իսկ վորեւե դասակարգի «պետութեան վերացումն առանց սոցիալիստական հեղաշրջման անհեթեթութեանն», ինչպես գրում եր Ենդելսը 1872 թ. հունոյին ուղղած իր նամակում:

Այն բոլոր իրավունքները, վորոնցով անգլիական բանվորութեանն այս կամ այն չափով այժմ տգտվում ե, ձեռք են բերված յերկարատե դասակարգային կովի միջոցով: Մեր աչքի առաջ, 1927 թվականին, անգլիական բուրժուազիան ընդունեց բոլորին հայտնի այն որենքը, վորով գործադուլային շարժումը մեծագուշն սահմանափակումներ յե յենթարկվում: Այդ որենքի հետևողական կիրառումով անգլիական բուրժուազիան ձգտում ե կանխել 1926 թ. մայիսյան ընհանուր գործադուլի կրկնութեանը: Կամ թե մտաբերենք լրդերի պալատի կողմից 1909 թ. ընդունած այն «պատմական» վորոշումն Ոսթրնի գործի առթիվ վորով պրոֆմիլութեանները զրկվում եյին քաղաքական գործունեութեան հնարավորութեանից: Անգլիական բանվորութեան դասակարգային կովի պատմութեանն նման որինակներով չափազանց հարուստ ե: Բավական ե, վոր բանվորութեանը մի խոշոր և ինքնուրույն դասակարգային առաջադիմական քայլ անի, վորպեսզի բուրժուազիան նրա կովի ձանապարհին անմիջապէս պատնէշներ կանգնեցնի: Յեվ այլ կերպ վարվել բուրժուազիան չի կարող: Այնպես վոր յեթե նա հանդուր

ծում ե բանվորական կառավարութեանն, արդեն այդ մի փաստը միայն, առանց վորեւե մեկնաբանութեաների, մեզ այն ե ասում, վոր բանվորական կուսակցութեանը և բանվորական կառավարութեանը բանվորական են անունով միայն: Յերկու դասակարգեր միաժամանակ իշխել չեն կարող. մեկը — կառավարութեան մեջ, մյուսը — տնտեսական ու հասարակական կյանքի բոլոր բնագավառներում: Այդ կնշանակելը քաղաքականութեանն ընդունել վորպես մի ինքնուրույն ուժ, վորը տնտեսական-հասարակական կյանքի հետ վորեւե առնչութեան չունի, այնինչ քաղաքականութեանն, ինչպես մեր կուսակցութեան X ղ համագումարում ասում եր Վ. Ի. Լենինը, «это — сконцентрированная экономика»:

Ամենաթույլ կուսակցութեաններն անգամ առանց դիմադրութեան իրենց դասակարգային դիրքերը յերբեք և վոչվոքի չեն զիջում: Առավել ևս չի կարելի նման պատկերներ ունենալ անգլիական բուրժուազիայի, վորը դեռ այնքան ուժեղ ե, վոր պրոլետարիատի նկատմամբ հարձակողական քաղաքականութեան ե վարում և նրա դասակարգային կազմակերպութեանը հաջողեցնում ե քաղաքականապես ու բարոյապես իրեն յենթարկելու, իր ձեռքում իսկական խաղաղեք զարձնելու: Անգլիական պրոլետարիատի ազգային մասին դեռ 1858 թ. Ենդելսը գրում եր Մարքսին. «Անգլիական պրոլետարիատը փաստորեն ավելի ու ավելի բուրժուական ե դառնում, այնպես վոր, ինչպես յերևում ե, բոլոր ազգերից այդ ամենաբուրժուականը ձգտում ե բուրժուազիայի կողքին ունենալ բուրժուական արիստոկրատիայի բուրժուական

պրօլետարիատ («Письма», изд. 1922 г., стр. 73): Յեթե մի ժամանակ, ըստ Մարքսի արտահայտութեան անգլիական բուրժուազիան հանձին վիզերի ուներ իր «արիստոկրատիկ ներկայացուցչութունն» (հատ. Տ. հշ 6), այժմ անգլիական կալվածաֆեոդալները յեղանգլիական բուրժուազիան, հանձին բանվորական կառավարության, ունեն իրենց բանվորական ցեղայացուցչութունը: «Բուրժուական պրոլետարիատը ստեղծելու ձգտումը, վորի մասին ենգելուը գրում ել մեր ժամանակից 71 տարի առաջ, արդեն լիովին իրականացած ե և իրականացած ե բանվորական կուսակցութեան աշակցութեամբ, նրա ջանքերով:

Հանձարեղութեան հավակնութեան իրավունքը բուրժուազիային մերժել չի կարելի այն բոլոր դեպքերում, յերբ խնդիրը վերաբերում ե պրոլետարիատին շահագործելու, ճնշելու և խաբելու միջոցներին ու չեղանակներին: Մյուս յերկրների իր չեղարջրակիցներին ու գաղափարակիցների հետ միասին, կշանք այս բնագավառում անգլիական բուրժուազիան ել այնքան հանձարեղ ե, վոր պրոլետարիատի ուժերով կանգուն ե պահում կապիտալիստական հասարակարգը, մի հասարակարգ, վորը պատմականորեն դատապարտված ե կործանվելու նույն պրոլետարիատի ձեռքով: Բայց բուրժուազիայի այդ «հանձարեղութունը» նրանով ե պայմանավորվում, վոր բանվորութեան շարքերում նրան հաջողվել ե դանել կաշառել փոքրաթիվ մի խավ, վորը՝ թագնված արցիալիզմի դիմակի տակ՝ անգլիական վոլշ պրոլետարիատի շահը և նրա շարժման ապագան գոհարեցրում բուրժուազիայի շահերին և իր ժամանակավոր խմբա-

կալին շահերին, վորը բանվոր դասակարգին ծառայեցնում ե արդեն կործանվող կապիտալիզմը փրկելու և ամրապնդելու հակահեղափոխական ստոր գործին:

Ընդհատ չենք արտահայտվում, յերբ ասում ենք, վոր բանվորական կուսակցութեանը հաղթութուն ե տարել: Բանվորական կուսակցութեան ամեն մի հաղթութուն, վորը պահվում ե իշխանութեան գրավումով, պետք ե անմիջապես ուղղվի ընդդեմ կապիտալիստական սեփականութեան, ընդդեմ բուրժուական պետութեան և բուրժուական կարգերի: Ել չենք խոսում այն մասին, վոր նման ամեն մի հաղթութուն կարող ե ձեռք բերվել քաղաքացիական կռիվ զենքով միայն: Հաղթութեան մասին ի՞նչ խոսք կարող ե բարձրանալ բանվորական կուսակցութեան նկատմամբ, վորին Անգլիայի իրոք տիրապետող դասակարգերը միայն թույլ են տվել կառավարչական դիրքերում իրենց ժամանակավորապես փոխարինելու, իրենց դատարար վոճիրները համար քավութեան նոխարի դեր կատարելու և իրենց քաղաքականութեան մեջ մի շարք անհրաժեշտ փոփոխումներ մտցնելու, վորոնք կապիտալիզմի կործանվող շենքի ամրապնդման գործին են ծառայելու: Բանվորական կուսակցութեան այդ հաղթութունը բուրժուազիային առանձնապես շահավետ ե այն տեսակետից, վոր կառավարչական պոստերի այդ ժամանակավոր զիջումով բուրժուազիան ուժեղացնում ե բանվորների շարքերում պարլամենտական դեմոկրատիայի հետ կապված իլլյուզիաները, բանվորների աչքում բարձրացնում ե իր խոնարհ ծառաների հեղինակութունը և այդպիսով դասակարգային կռիվ գաղափարին մի նոր ու ծանր հարված ե հասցնում:

XI

Ի՞նչ հուշսեր կարելի չե կապել մի կառավարութեան հետ, վորին յերկրի այժմյան իսկական տերերի կողմից թույլ ե տված ժամանակավորապես կառավարելու, և վորը, հետևապես, անգոր ե բավարարելու պրոլետարիատի ամեն մի պահանջ, վորը կապիտալիզմի գոյութեան դեմ ե ուղղած: Բնական ե, վոր բանավորական կուսակցութունը գործելու չե կապիտալիզմի հողի վրա, բանվորութեան համար խեղդիչ հանդիսացող բուրժուական հասարակարգի նեղ շրջանակներում և վոր նրա գործունեյութեան բարձրագույն սկզբունքը լինելու չե վոչ թե պրոլետարիատի շահը վոչ թե կոմմունիզմը, այլ բուրժուազիայի կամքը: Նույնիսկ այն դեպքում, յեթե կատարվի պատմութեան ութերորդ հրաշքը, և բանվորական կառավարութունը վորոշի հետևողական պրոլետարական քաղաքականութուն վարելու, նա կրկին անգորութեան մատնված կլինի, վորովհետև կուլի բոլոր գեները բուրժուազիայի ձեռքում են կենտրոնացած: Յեթե նա մի աննշան փորձ անի հոգուտ բանվորների ողորմագործելու անդլիական Ֆինանսները, բանակը, վոստիկանութունը և ընդհանրապես պետական ասպարատն իսկույն կհամոզվի, վոր հենց մինիստր-նախագահի գրասենյակը լենթարկվում ե պարտված պահպանողականներին ու լիբերալներին և վոչ թե հաղթանակած բանվորական կառավարութեանը, վորը կառավարութեան իլլյուզիա չե միայն:

Այստեղից չպետք ե այն չեզրակացութունն անել, վոր բանվորական կառավարութունը դադապարտված ե վոչինչ չանելու: Ընդհակառակը, նրա առաջացվան պայմաններն անհրաժեշտ են դարձնում, վոր

նրան թույլ տրվի ներքին ու արտաքին քաղաքականութեան բնագավառներում մի շարք խոշոր խնդիրներ լուծելու, վորոնք անլուծելի չեն մնացել պահպանողականների անհեռատեսութեան շնորհիվ միայն, և վորոնց լուծումով անգլիական կապիտալիզմի հիմքերը վոչ թե խախտվում, այլ ժամանակավորապես զեռամբապնդվում են:

Այդ խնդիրներից ամենախոշորը Խորհրդային Միութեան հետ բարեկամական հարաբերութուններ հաստատելն ե, և, ըստ բոլոր տվյալների, Մակդոնալդի կառավարութունն այդ քայլն անելու չե: Մակալին պարզ ե, վոր այդ քայլում սոցիալիստական վոչինչ չկա, բանվորական կառավարութունից պահանջվում ե հետևել ավելի հեռատես բուրժուական կառավարութունների որինակին: Կոմմունիզմի շահերը յիսկիտունենալով չի, վոր բանվորական կառավարութունը խորհրդային իշխանութեան հետ դիվանագիտական հարաբերութունների մեջ ե մտնելու: Ինչպես իր ամբողջ քաղաքականութեան մեջ, ներկա դեպքում ել բանվորական կուսակցութունը յելակետ ունի վոչ թե պրոլետարիատի միջազգային ազատագրական շարժման շահերն, այլ բացառապես անգլիական բուրժուազիայի շահերը, այն բուրժուազիայի, վորը ցանկանում ե խորհրդային Միութեան հետ վերականգնել դիվանագիտական հարաբերութունները, սակայն գերադասում ե այդ գործը կատարել բանվորական կուսակցութեան ձեռքով, վորովհետև իր վայրագ հախորհրդային քաղաքականութեամբ ինքն իր առաջ փակել ե խորհրդային-անգլիական բանակցութունները վերսկսելու բոլոր ճանապարհները:

Անգլիայի արտաքին քաղաքականութեան մյուս չափազանց կարևոր խնդիրը նրա կառավարութեան վերաբերմունքն է դեպի գաղութային ու կիսագաղութային ժողովուրդները: Բանվորական կուսակցութեան պատմութեան մեջ անհնարին է մի դեպք նշել, չե՞րբ գաղութների նկատմամբ այդ կուսակցութունը սոցիալիստական կուսակցութեանն արժանի դիրք բռնած լիներ: Իսկ բանվորական կուսակցութեան առաջին կառավարութեան ամբողջ պրակտիկան 1924 թ. ընթացքում գաղութային ժողովուրդներին վերջնականապես համոզեց, վոր բանվորական կառավարութեան քաղաքականութունն այդ ասպարիզում էլ բուրժուական կուսակցութունների քաղաքականութեան շարունակութունն է, այս վերջինից վոչնչով չի տարբերվում: Այնինչ գաղութների ազատագրումն այն նշանակութունն ունի, վոր նրանից անմիջապես կախված է հենց իրեն՝ անգլիական բանվորի ազատագրումը: «Յես ավելի ու ավելի գալիս եմ այն համոզմունքին, վոր անգլիական բանվորութունը չե՞րբեք չպետք է կարողանա բռն Անգլիայում մի վճռական առաջադիմական քայլ անել, մինչև վոր վերջնականապես չհրաժարվի այն քաղաքականութունից, վորին տիրապետող դասակարգերը հետևում են իրլանդական խնդրում, և այժմ պահանջվում է միայն, վոր այդ համոզմունքն արմատացվի Անգլիայի բանվոր դասակարգի գլխում», գրում էր Մարքսը կուգեմմանին 1869 թ. («Письма», 176): Նույնը վերաբերում է Հնդկաստանին Անգլիայի լծի տակ տքնող բոլոր մյուս գաղութներին, վորոնց ճնշման վրա չէ հիմնած — գրում էր Ենգելսը 1856 թ. — «անգլիական քաղաքացիների այսպիսի կոչվող ազատութունը» («Письма», 170):

Յեթե պարլամենտական կարգերուժ տիրապետող այսպես կոչվող ազատութուններն ամենուրեք վեր են անվում շահագործման ու ճնշման միջոցի, չե՞րբ խընդելը վերաբերում է բանվոր դասակարգին, ապա նրանց այս դերը կրկնապատիկ ու յեռապատիկ ավելի ծանր, ավելի անտանելի յե դառնում, չե՞րբ խնդիրը վերաբերում է գաղութներին, չե՞րբ իր ազատութուններից բուրժուական ոգավում է՝ գաղութային ժողովուրդներին «գաստիարակելու», նրանց մեջ «կուլտուրա» տարածելու նպատակով: Բանվորական կուսակցութեան իդեոլոգները բազմիցս հայտարարութուններ են արել այդ «գաստիարակման» նպատակների ու յեղանակների մասին, բուրժուազիայի գաղութային քաղաքականութունն արդարացնող հայտարարութուններ, վորոնք գաղութային ժողովուրդներին լավ հայտնի չեն, և վորոնցից հետո գաղութներին լավ հայտնի չեն, և վորոնցից հետո գաղութային ժողովուրդները բանվորական կուսակցութեան նկատմամբ վորևէ իլլուզիաներով տարվել չեն կարող:

Բանվորական կառավարութունն ինքն էլ չի թաքցնում, վոր խորհրդային իշխանութեան և անգլիական գաղութների նկատմամբ վարելու չէ հետևողական բուրժուական քաղաքականութուն: Բնական է, կան բուրժուական քաղաքականութուն: Բնական է, վոր Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի և այլ բուրժուական յերկրների նկատմամբ նրա քաղաքականությունը չի կարող չլինել արևիբուրժուական: Վոչ պատկառական ու հասկանալի չէ, վոր ներքին քաղաքականութեան մեջ էլ այդ կուսակցութունը հետևողական բուրժուական տեսակետով դեկավարվի: Անգլիական բուրժուական տեսակետով չկա ավելի կարևոր, չիտալի ներքին կյանքում այժմ չկա ավելի կարևոր,

ավելի հուզումնալից մի խնդիր, քան գործադրկության մեղմացումը, մի գործ, վորի իրականացումն աշխան Մնգլիսյում պայքարի սովորական բուրժուական շեղանակներով անհնարին է, իսկ բանվորական կառավարությունն անվերջ յերզվում է, վոր իր գործունեությունը և վոչ մի բնագավառում բուրժուական շրջանակներից դուրս գալու մտադրություն իսպառ չունի:

Գործազուրկների մոտ յերկու միլիոնանոց բանակը և արդյունաբերություն մի շարք ճյուղերի ճեղքնաժամային գրությունը կառավարությունից պահանջում են արտակարգ, ուղղակի հերոսական միջոցների դիմել: Առանձնապես ծանր է քարածուխի արդյունաբերությունը գրությունը: 1928 թ. արդյունաբերության այդ ճյուղը ավել է 1913 թվականի արտադրանքի 83 տոկ, բայց միաժամանակ տվել է նաև գործազուրկների և կորցրած բանվորական ուրբի ամենաբարձր տոկոսը: Մինիստրական բազկաթուղները նվաճելու համար բանվորական կուսակցությունը դասակարգային համերաշխություն եր քարոզում, բայց նրա կառավարությունը հազիվ գործի չե անցել, և բուրժուազիան արդեն նրան հրամայողական պահանջներ է առաջադրում՝ ոգտագործելու իր կապերը և իր հեղինակությունը գործազուրկային շարժումները ճնշելու և կանխելու համար: Այն պայմանները, վոր մշակից Մոնդի զեկավարությունը աշխատող և բանվորների ու կապիտալիստների ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովն «արդյունաբերության խաղաղություն» մասին, բուրժուազիան արդեն չեղյալ է հայտարարում, իսկ բանվորության խաթաներկայացու-

ցիչները, վորպես ամենաստոր արպի ագենաներ ու լաքեյներ, բանվորությունը համերաշխություն և լեղբայրություն են քարոզում, ավաշկարա հայտարարելով, վոր դասակարգաին կոիվը չարիք է, և վոր իրենց կուսակցությունն ապագասակարգային է:

XII

Իր ամեն մի քայլով և իր ամբողջ գործունեությունը բանվորական կառավարությունը վարկաբեկելու չե իր սեփական կուսակցություն և տրեդ-յունիոնների քաղաքականությունը, վարկաբեկելու չե այն աստիճան, վոր պրոլետարիատի շարքերում այլևս պաշտպանություն չգտնի և հարկադրված լինի առանց վորևի դիմադրության իշխանությունից հրաժարվելու այն մոմենտին, յերբ բուրժուազիան համապատասխան հրաման կարձակի՝ հանուն պարլամենտական դեմոկրատիայի: Բայց Մնգլիսյայի պարածարդի տնտեսական-հասարակական պայմաններում բանվորական մասսաներին նորից իր թակարդի մեջ կզցի, վոր բանվորական կառավարությունը վտարելուց հետո առաջվա նմա կկարողանա հենվել բանվորական մասսաների վրա: Պրոլետարիատի հետպետերազմյան շարժումներն Մնգլիսյայում և հատկապես 1926 թ. մայիսյան գործադուլն, ինչպես և վերջին պարլամենտական ընտրությունները կատկած չին թողնում նրանում, վոր անգլիական բանվորությունը ձախացել է, վոր նրա շարքերում չափազանց խորը գնացող գաղափարական հեղաշրջում է կատարվում, և վոր անտորակույս հասունանում ու մոտենում է

պատմական աչն մոմենտը, յերբ անգլիական պրոլետարիատն իր մասսայում ձեռք կքաշի վոչ միայն բուրժուական կուսակցութուններից, այլ և համաձայնողական արհեստակցական ու քաղաքական բանվորական կազմակերպութուններից և վորպես իր միակ, իր հարազատ դասակարգային ներկայացուցիչ ու ղեկավար կճանաչի կոմունիստական կուսակցութունը:

Պրոլետարիատի շահերի տեսակետից բանվորական կուսակցության այս վերջին ընտրական հաղթությունն այն միակ դրական հետևանքն է ունենալու, վոր ուժեղ կերպով նպաստելու չէ բանվորական մասսաների դասակարգային գիտակցության բարձրացման գործին և գոլորշիացնելու չէ տասնյակ տարիների ընթացքում նրա շարքերում բուն դրած բազմաթիվ իլյուզիաներ:

1869 թ. Մարքսը գրում էր կուզեմանին, վոր «կարևոր է հենակետ գտնել հենց Անգլիայում, վորովհետև ընդհանրապես սոցիալական ազատագրման կշեռքի նժարների վրա անգլիական բանվորն անպայման վճռական նշանակություն ունի» («Письма», 177): Անգլիայի տնտեսական զարգացման բարձր աստիճանը և նրա միջազգային դիրքը թե հնարավոր է թե անհրաժեշտ են դարձնում, վոր շահագործիչ մարդկության ազատագրական պայքարի գործում անգլիական պրոլետարիատն իրոք վճռական դեր կատարի: Կապիտալիստական հասարակությունն անընդհատ և արագ քայլերով մոտենում է իր կործանման մոմենտին, իր ամեն մի նոր նվաճումով իր սեփական կործանումն է նախապատրաստում: Անգլիայի բան-

վորական կուսակցության այդ հաղթությունը վոչ այլ ինչ է, բայց չեթե կապիտալիզմի ապրած ծանր ճեղքաժամի անմիջական հետևանքը և բուրժուազիայի քայքայման ու անդորուծյան անվիճելի ապացույցը: Այդ հաղթությունը մեզ այնչե ասում, վոր բուրժուազիան սնանկացել է, վոր նա արագ քայլերով զերկվում է իր տիրապետությունը պահպանելու հնարավորությունից: Միաժամանակ այդ հաղթությունը մեզ ցույց է տալիս, թե բուրժուազիային ով կարող է ժառանգել: Այդ ժառանգը բանվոր դասակարգն է, և ամբողջ խնդիրն այն է, վոր բանվորությունը դասակարգայնորեն կազմակերպվի և բուրժուազիայից ֆնացող ժառանգությանը տիրանալու ընդունակություն ձեռք բերի:

Անգլիայի կոմունիստական կուսակցության առաջ պաշարի և սեփական շարքերի ուժեղացման անսահման լայն հորիզոններ են բացվում: Անգլիայի բանվոր դասակարգի առաջ կանգնած հիմնական խնդիրն արտադրության միջոցների և իշխանության գրավումն է, մի գործ, վոր նա կարող է կատարել կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և քաղաքացիական կռիվի միջոցով միայն: Հեղափոխական պայքարի նկատմամբ բանվորական կուսախական պայքարի նկատմամբ բանվորական կուսակցությունը վոչնչով չի տարբերվում Ֆարեականներից, Ենգելսը գրում էր, վոր «հեղափոխության հանդեպ ունեցած վախը նրանց հիմնական սկզբունքն է», այնինչ իրոք բանվորական կառավարություն, սոցիալիզմի շահերին ծառայող կառավարություն բանվոր դասակարգը կարող է ստեղծել հեղափոխության ղեկավար միայն: Կապիտալիզմի

հետ միասին փոխել եւ մեր առաջ իր քաղաքայման պրոցեսսն եւ ապրում նաև բուրժուազիայի գոյութեան քաղաքական գենքը—պարլամենտական դեմոկրատիան կամ, ավելի ճիշտն ասած՝ բուրժուազիայի պարլամենտական դիկտատուրան, վորը կարող եւ փոխարինվել պրոլետարական դիկտատուրայով միայն:

Միքանի տարի առաջ Լյուդ Զորջը հայտարարում եր, վոր պարլամենտական կարգերը կարոտ են կարկատանի: Այժմ նրան ձաջնակցում եւ Շտրեկեմանը, գերմանական ժողովրդական կուսակցութեան կենտրոնական կոմիտեյի նիստերից մեկում պաշտպանելով այն միտքը, վոր դեմոկրատիայի փրկութեան միակ միջոցը հենց այդ նույն դեմոկրատիայի սահմանափակումն եւ: Համաշխարհային բուրժուազիայի այդ ականավոր ներկայացուցիչների ծրագրերը տասնյակ մեծ ու փոքր լեհերներում հաջողութեամբ կիրառում են Պիլսուդսկիները, վերջնականապես անդորութեան մատնելով եւ վարկաբեկելով պարլամենտները: Կոմմունիզմի գործին դրանով նրանք ամենամեծ ծառայութեան են մատուցում, ժողովրդական մասսաներին գործնական դասեր տալով այն մասին, վոր պարլամենտական կարգերի դարն իրոք անցել եւ: Սակայն պարզ եւ, վոր հրաժարվել իր դիրքերից բուրժուազիան չի կարող, պրոլետարական հեղափոխութեանը ցույց չտալով «յերկարատե, համառ, կատաղի դիմադրութեան» եւ «չփորձելով իր առավելութեանները վերջին հուսահատական կռվում, մի շարք կոիվներում» (Լենին):

Ամենամեծ, ամենաոգտավետ գործը, վոր կկատարի բանվորական կառավարութեանը, կլինի իր

սեփական սնանկացումը, իր սեփական կուսակցութեան վարկաբեկումը: Բանվորական կուսակցութեան ձախացումը կատարելապես անհնարին եւ: Նրա համաձայնողական իդեոլոգիան տասնյակ տարիների պատմութեան ունի: Նրա հիմնական սկզբունքն եւ դասակարգային շահերի ներդաշնակութեանը, չափավորութեանը քաղաքականութեան մեջ եւ, հետևապես, ռեֆորմիզմը: Իր այս սկզբունքներին նա միշտ ել այնքան հարազատ եւ չեղել, բուրժուազիայի հետ հաստատած բարեկամութեանն այնքան խոր արմատներ եւ թողել, վոր վոչվոք չի կարող նրա հետ հեղափոխական քաղաքականութեան հույսեր կապել: Իսկ 1924 թվականին նրա կառավարութեանն իր պրակտիկայով մի ավելորդ անգամ ապացուցեց, վոր բանվորական կոչվող այդ կուսակցութեանն իրոք բուրժուական կուսակցութեանն եւ: Կառավարութեան գլուխ անցնելով, կապիտալիզմի հիմունքները նա թողեց անստատան եւ սահմանափակվեց միքանի մանր մասային ռեֆորմներով, վորոնք ընդունելի յեն ամեն մի աշակողմյան կառավարութեան համար: Բանվոր դասակարգի դրութեան բարելավման վորեւ հույսեր արկարգի դրութեան հետ կապել չենք կարող, այժմ ել նրա գոյութեան հետ կապել չենք կարող, այժմ եւ նրա պրակտիկան 1924 թ., վորովհետեւ թեւեւ եւ նրա պրակտիկան 1924 թ., վորովհետեւ բուրժուազիայի քաղաքականութեան շրջանակներից դուրս չեկող վորեւ պահանջի պաշտպանութեանից: Նա ինքն ել հրապարակորեն հրաժարվում եւ, եւ վորովհետեւ հետևողական պրոլետարական քաղաքակառավարութեան վարելը բուրժուազիան նրան չերբեմն թույլ նուութեան վարելը բուրժուազիան նրան չերբեմն թույլ չի տալ, համոզված լինելով, վոր բանվորական կու-

սակցութունը չի համարձակվիլ իր դեմ զենք քար-
ձրացնել և դասակարգային կռվի բոլոր միջոցներով
պաշտպանել պրոլետարիատի շահերը:

Իդուր չե, վոր բանվորական կուսակցության
կազմակերպման շրջանում նրա ղեկավարների մի
մասն առաջարկում եր կուսակցությունն անվանել
վոչ թե բանվորական, այլ լիբերալ:

XIII

Բայց չեթե բանվորական կուսակցության ձա-
խացումն անհնարին է, բանվորական լայն մասսանե-
րի ձախացումը կասկածից դուրս է: Մի ամբողջ դար
շարունակ Անգլիայի բանվորությունն իր շահերի
պաշտպանությունը հանձնելիս է չեղել մերթ լիբե-
րալներին, մերթ պահպանողականներին: Հետպատե-
րազմյան շրջանի գործադուլները, մասնավանդ 1926 թ.
մայիսյան ընդհանուր գործադուլը, նույն շրջանի
պարլամենտական ընտրությունները, ձախ ֆրակ-
ցիայի կազմակերպումը արեգ-յունիոնների շարքե-
րում և տասնյակ այլ նշաններ այդ ձախացման ան-
հերքելի ապացույցներ են: Անգլիայի բանվորու-
թյունն աշխարհի ամենահին բանվորությունն է վոչ
միայն իր շահագործման վողբերգական պատմությու-
նով, վոչ միայն իր դասակարգային կռվի փառավոր
անցյալով և իր արեգ-յունիոններով, այլ և իր գե-
րությամբ բուրժուազիային, իր համաձայնողական
քաղաքականությամբ և հաճախ նույնիսկ իր պահպա-
նողական քաղաքականությամբ: Նրա համար ստեղծ-
ված քաղաքական այդ ծանր վիճակը հետևանք է այն
դրության, վոր 18-րդ դարի կեսից սկսած՝ Անգլիան

դառնում է աշխարհի ամենազորեղ գաղութային պե-
տությունը, և անգլիական բուրժուազիան, վորպեսզի
կարողանա պրոլետարիատին հնազանդության մեջ
պահել, գաղութներում կատարած թալանի մի չնչին
տոկոսով կաշառում է նրա վերին խավիրը և այդ
խավիրի՝ բանվորական արխտոկրատիայի միջոցով
ամբողջ պրոլետարիատին քաղաքականապես իրեն է
յենթարկում:

Անգլիական պրոլետարիատին բուրժուազիայից
աղատագրելու հիմնական նախադրյալը է նրա ազա-
տագրումը ռեֆորմիստների լծից, իսկ այդ ազատա-
գրման ամենարմատական միջոցն անգլիական գա-
ղութների և կիսագաղութների հեղափոխական ան-
ջատումն է: Անգլիական բուրժուազիան շատ լավ գի-
տակցում է, վոր գաղութներն իրեն անհրաժեշտ են
վոչ միայն հավելյալ արժեք կուտակելու, այլ և պրո-
լետարիատին քաղաքականապես իր ձեռքում պահե-
լու համար: Անգլիական իմպերիալիզմի ամենաակա-
նավոր ներկայացուցիչներից մեկը՝ Սեսիլ Ռոզսը,
դեռ 1895 թ. այն տեսակետն էր պաշտպանում, վոր
քաղաքացիական կռվից խուսափելու միակ միջոցը
հետևողական իմպերիալիստական քաղաքականու-
թյունն է:

Պարլամենտական պայքարի և ռեֆորմիների մի-
ջոցով անգլիական պրոլետարիատն ստեղծված ծանր
դրությունից դուրս գալ չի կարող, վորովհետև գոր-
ծադրկության վերացումը և գաղութային խնդրի լու-
ծումը բուրժուազիայի տիրապետության, այսինքն
կապիտալիստական վողջ աեժիմի վերացում են պա-
հանջում: Բուրժուազիայի միակ ժառանգը պրոլետա-

ըրիտան և, բայց այստեղից բոլորովին չի հետևում, վոր պրոլետարիատը նույնպես և ժառանգելու բուրժուազիային, ինչպես կապիտալիստ վորդին ժառանգում և իր հորը՝ վերջինի մահից հետո և համաձայն նրա թողած կտակի: Առանց հեղափոխական դասակարգային պայքարի, առանց բուրժուազիայի սեփականագրկման և առանց իր սեփական պետական իշխանության պրոլետարիատը միշտ ել անզոր կլինի սոցիալիզմի ուղիով վորևե խոշոր քաչ անելու:

Բանվորական կառավարությունն իր ընտրական մանիֆեստում խոստանում և կանգուն պահել կապիտալիզմի շինքը և անգլիական կայսրությունն, այսինքն դեմ և արտահայտվում թե սոցիալիզմին և թե գաղութների ինքնորոշման իրավունքին: Միակ կուսակցությունը, վորն ընդունակ և կովելու թե ընդդեմ անգլիական բուրժուազիայի և թե ընդդեմ նրան սարկացած բանվորական կուսակցության, Անգլիայի կոմմունիստական կուսակցությունն և, վորի ընտրական ծրագրի հիմնական կետը **հեղափոխական բանվորական կառավարություն ստեղծելու պահանջն** էր, մի կառավարություն, վորը կարող և ստեղծվել հեղափոխության միջոցով միայն և վորը կոչված և հեղափոխական սոցիալիստական շինարարությամբ զբաղվելու:

Բուրժուազիայի քաղաքականությունը շարունակելու համար չե, վոր կոմկուսը հեղափոխական բանվորական կառավարության պահանջ և առաջադրում: Վերջինը պետք և սոցիալիզմի գործիք լինի և, հետևապես, իր գոյության առաջին մոմենտից սկսած պետք և վոչ միայն ջախջախի բուրժուազիայի պե-

տական ապպարատը, այլ և վերացնի բուրժուազիայի յիրապետության տնտեսական նախադրյալները: Ահանչու կոմկուսը պահանջում և հողի, հանքերի, խոշոր արդյունաբերության, բանկային գործի և չերկաթուղիների ազգայնացում, միաժամանակ պաշտպանելով գաղութների ինքնորոշման, այսինքն նրանց կատարյալ անջատման իրավունքը: Բրիտանական կայսրությունն, ասված և մանիֆեստում, «ժողովուրդների մամաշխարհային բանտ է»: Այդ բանտի կործանման պահանջը կոմկուսի ընտրական ծրագրի ամենահիմնական նշանաբաններից մեկն էր:

Անգլիայում սոցիալիստական բանվորական հանրապետություն հաստատելուց հետո կոմկուսը պահանջելու չե, վոր այդ նոր սոցիալիստական հանրապետությունը միանա Ս. Ս. Հ. Միությանը ֆեդերատիվ հիմունքներով: Գաղութները կատարելապես ազատագրվում են և կարող են նույն ֆեդերատիվ հիմունքներով միանալ Անգլիային, յեթե նրանց դեմ կրատական կամ սոցիալիստական կառավարություններն այդ միացումը կգտնեն նպատակահարմար և անհրաժեշտ:

Ընտրական ծրագրի մյուս պահանջներից նշենք բանվորական միլիցիա կազմակերպելու և արդյունաբերության մեջ անմիջապես 7-ժամյա բանվորական որվա անցնելու պահանջները: Բանվորական որվա ստեղծությունն աստիճանաբար կրճատվելու չի մինչև 7 ժամ:

Իրենց արդյունաբերությունը ճգնաժամային վիճակից փրկելու համար Անգլիայի կապիտալիստները այսինքն ծրագրով ուսցիոնալացում են կատարում, և բան-

վորական կուսակցութիւնը խոստանում է առաջվա նման աջակցել այդ ռացիոնալացմանը: Սակայն, հայտարարում է կոմկուսը, այդ ռացիոնալացումը կատարվում է ի հաշիվ բանվորների. նրա հետևանքով յերկարացվում է բանվորական որվա տնտեսութիւնը, աճում է գործազուրկների թիվը, նվազում է աշխատավարձը, և, բացի այս ամենից՝ արհեստակցական միութիւնները զրկվում են դասակարգային հողի վրա կալելու հնարավորութիւնից: Կապիտալիստական ռացիոնալացման հաջողութիւնը յենթադրում է, վոր արհեստակցական միութիւնները վոչ թէ բուրժուազիայի դեմ կռվում, այլ պաշտպանում են նրա հարձակողական քաղաքականութիւնը: Բանվոր դասակարգի շահերի այս աշկարա դավաճանութիւնը կոմկուսը հակադրում է պրոլետարական հեղափոխութիւն և արդյունաբերութիւն սոցիալիստական ռացիոնալացման պահանջները:

Գործազրկութիւնը մեղմացնելու և բանվորների աշխատավարձը բարձրացնելու համար բուրժուազիայի հետ միասին բանվորական կուսակցութիւնն ել կողմնակից է կայսրութիւն պահպանման, այսինքն՝ Հնդկաստանի, Յեզիպոսի և տասնյակ այլ յերկրներէ ստրկացման գնով ծրագրվում է բանվորական մասսաներին մի անգամ ել խարել և նրանց վոչինչ չտալ: Այս ծրագրին կոմկուսը հակադրում է բոլոր ժողովուրդների անջատման ու ազատ ինքնորոշման իրավունքի պահանջը: Առանց գաղութների բուրժուական Անգլիան անմիջապէս կկործանվի: Սոցիալիստական Անգլիան յեղբայրական կապեր կհաստատի Խորհրդային Միութիւն հետ և պրանով կապահովի իր ար-

դյունաբերութիւն վերելքը: Միաժամանակ սոցիալիստական Անգլիան Ֆեդերատիվ և այլ տեսակի բարեկամական հարաբերութիւնների մեջ կմտնի ազատագրված գաղութների հետ, վորոնց մեծամասնութիւնը—պետք է լինթադրել—այդ կապն իր համար անհրաժեշտ կհամարի, վորպեսզի կուլ չզնա ուրիշ բուրժուական պետութիւնների և սոցիալիստական Անգլիայի ոգնութիւնը բարձրացնի իր տնտեսութիւնը և իր կուլտուրան:

Այս յերկու հիմնական կետերում բանվորական կառավարութիւնն ամբողջապէս պաշտպանում է բուրժուազիայի քաղաքականութիւնը և, հետևապէս, բանվորական մասսաներին խարում, նրանց ուժերը կրկին կապիտալիզմի ամբացման գործին է ծառայեցնում, բանվորներին հարյուր միլիոնավոր մարդկանց ստրկացման գործիք է դարձնում: Այս ամենը նկատի առնելով, կոմկուսը հայտարարում է, վոր վերջին պարլամենտական ընտրութիւնների ժամանակ բանվորական կուսակցութիւնը պատմական մի ամենամեծ սրիկայութիւն (жультничество) կատարեց, և վոր բուրժուազիայի ու բանվորական կուսակցութիւն լծից ազատագրվելու միակ միջոցը հետևողական դասակարգային կռիվ է, հեղափոխական բանվորական կառավարութիւն հաստատումն է:

Դասակարգը դասակարգի դեմ—հեղափոխական կռիվ—արտագրութիւն բոլոր հիմնական միջոցների ազգայնացում—պրոլետարիատի սոցիալիստական դիկտատուրա—գաղութների ազատագրում—Ֆեդերատիվ միացում Խորհրդային Միութիւն հետ—սոցիալիզմի հաղթանակ ամբողջ աշխարհում՝ ահա այն հեղափո-

4084

խական-սոցիալիստական ծրագիրը, վոր կոմկուսը հա-
կադրում է բուրժուազիայի և բանվորական կուսա-
կցության իմպերիալիստական ծրագրերին:

Իր հեղափոխության միջոցով անգլիական պրո-
լետարիատը կփոխարինի բուրժուական դիկտատու-
րան իր սեփական դասակարգային դիկտատուրայով,
բուրժուական դեմոկրատիան—պրոլետարական դեմո-
կրատիայով, վորը բերում է իր հետ «դեմոկրատիայի
աշխարհում շտեմնված զարգացում և ընդլայնում
հենց բնակչության վիթխարի մեծամասնության հա-
մար, շահագործվողների և աշխատավորների համար»,
ինչպես գրում է Լենինը Կառուցելու դեմ ուղղած իր
հայտնի գործում (16—460): Պրոլետարական դեմո-
կրատիայի հաստատումն այն միակ միջոցն է, վորով
վերջ կդրվի կապիտալի շահագործման ու ճնշման ու-
ժիմին Անգլիայում, և վորը հարջուր միլիոնավոր գա-
ղութային ժողովուրդներին կազատագրի անգլիական
բուրժուազիայի լծից: Բոլոր չերկրների կոմմունիս-
տական կուսակցությունները և ամբողջ աշխարհի
պրոլետարիատը կաջակցեն Անգլիայի կոմկուսի առաջ
կանգնած պատմական այս մեծ գործի հաջողությանը,
մի գործ, վորի իրականացումով համաշխարհային
պրոլետարական հեղափոխության ճանապարհից վե-
րանում է այժմ նրա ծավալմանը խանգարող խոշո-
րագույն արգելքը:



«Ազգային գրադարան»



NL0411021

